2005, ԱՊՐԻԼ Բ, ԹԻՎ 8 (196)

# Քրիստոնյա Հայաստան

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

## Հայոց Մեծ եղեռն-90

ՄԱՄԼՈ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

## Ծիծեռնակաբերդում կատարվեց կառուցվելիք մատռան հողի օրհնության կարգը

Հայոց ցեղասպանության 90-ամյա տարելիցի առիթով Ծիծեռնակաբերդում՝ Մեծ եղեռնի զոհերի հուշահամալիրի մոտ, կկառուցվի մատուռ: Ապրիլի 23-ին, մատռան հուշաքարի մոտ, ձեռամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, կատարվեց հողի օրհնության կարգ:

«Ծիծեռնակաբերդի այս բարձունքին կանգնեցվելու է սրբազան մատուռ, որտեղ մշտահունչ աղոթք է կատարվելու մեր մահացածների լույս հիշատակին: Այն կանգնեցվում է, որպեսզի այս մատուռից ճառագող օրհնությունը որպես ծածկույթ տարածվի մեր մեկ ու կես միլիոն զոհերի անթաղ ոսկորների վրա, եւ նրա հարկը դառնա անմեղ զոհերի հոգիների բնակարան: Սուրբ մատռան առջեւ մեր ժողովուրդը պիտի գա ուխտի, որպեսզի մասիսահայաց եղեռնի հիշատակաց այս հուշահամալիրների ներկայությամբ հաստատի իր հավատարմությունը մեր նախնյաց սրբազան հավատքին, ուխտի ապրել նրանց տեսիլքներն ու երազները կյանքի կոչելու վճռակամությամբ ու նախանձախնդրությամբ: Եկեղեցու զանգերը այս բարձունքից պիտի հնչեն, տարածվեն ի Սփյուռս աշխարհի, որպես կոչ ու հրավեր մեր ժողովրդին, որպեսզի շարունակի հետեւողականորեն հետամուտ լինել Հայոց Ցեղասպանության ճանաչման եւ դատապարտման նվիրական գործին, որպեսզի ոչ ոք չհամարձակվի երբեք ազգերի ոչնչացման չարահնար ծրագիր մտածել»,- ասաց Ամենայն Հայոց Հայրապետը:

Մատուռը կկառուցվի համազգային ընծայաբերությամբ:

Մինչ արարողությունը՝ հայրապետական թափորը եւ բոլոր ներկաները, ի հիշատակ Հայոց Մեծ եղեռնի բյուրավոր նահատակների, աղոթք բարձրացրին նաեւ Ծիծեռնակաբերդի հուշահամալիրի անմար կրակի մոտ:

Արարողությանը ներկա էին ՀՀ Արտաքին գործերի նախարար Վարդան Օսկանյանը, ՀՀ Կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարար Մանուկ Թոփուզյանը, Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու թեմակալ առաջնորդներ, Մայր Աթոռի միաբաններ: Արարողությանը մասնակցեցին նաեւ Հայոց Ցեղասպանության 90-ամյա տարելիցի առիթով Հայաստան ժամանած քույր եկեղեցիների բարձրաստիճան եկեղեցականներ ու պատվիրակները՝ Մոսկվայի Պատրիարքության միջեկեղեցական հարաբերությունների բաժնի փոխնախագահ, Մոսկվայի թեմի առաջնորդական փոխանորդ Մարկ եպս. Եգորյեւսկին, Ալեքսանդր սրկ. Վասյուտինը, դոկ. Սերգեյ Գովորունը (Ռուս Ուղղափառ եկեղեցի), Մալաթիուս արքեպիսկոպոսը (Ասորի Ուղղափառ եկեղեցի), Սերաֆիմ արքեպիսկոպոսը (Վրաց Ուղղափառ եկեղեցի), Կոռնելիուս եպս. Բարլադեանուլը (Ռումին Ուղղափառ եկեղեցի), Թերմոպիլեի Իոաննիս եպիսկոպոսը (Հույն Ուղղափառ եկեղեցի), Դեյվիդ եպս. Թասթինը (Անգլիկան եկեղեցի), ինչպես նաեւ Եվրոպայի եկեղեցիների Կոնֆերանսի նախագահ վեր. Ժան Առնոլդ դե Կլերմոնը:



Տես էջ 2

## Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի սրբատառ կոնդակը՝ նվիրված Հայոց Ցեղասպանության 90-ամյակին



*Սիրելի բարեպաշտ ժողովուրդ*

*Հայոց հավատի վեմ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից, որ ունենք պարգեւ մեզ երկնային ամենառատ շնորհով եւ օրհնությամբ, գոհության աղոթք ու փառաբանություն ենք մատուցում Բարերար Աստծուն այսօր, երբ 90-ամյա հիշատակության առջեւ Հայոց Մեծ Եղեռնի, ի Հայաստան եւ ի Սփյուռս վերածնված ժողովրդով համարձակածայն կարող ենք կրկնել առաքյալի խոսքը. «Զի ինձ կեանք Քրիստոս է»:*

*Արդարեւ, Քեզ ապավինողը ամոթով չմնաց, Տեր, քանզի Դու ես Հարուցյալ, եւ Քո խոսքը՝ կենդանի ու կենդանարար ու հավիտենական: Քեզ գիտենք հերեւ ճշմարտություն, սեր եւ ողորմություն՝ Արարիչ ու Ամենախնամ, Ողորմած ու Փրկագործ: Քեզ գիտենք հեբեւ Ամոքիչ ու Առաջնորդող պահապան զորություն: Մեր հայրերից այսպես ուսանեցինք՝ փառավորելով Քեզ՝ Միածին Որդուդ, Հորը եւ Սուրբ Հոգուն:*

*Քրիստոսի հետ հարության հույսով, մահվան դեմ կյանքի հաղթության հավատով ապրեց ու ստեղծեց մեր ժողովուրդը: Դարերի մեջ բազում ավերներ ու հողմեր տեսավ, բազմիցս գերեզման իջավ, բայց Քրիստոսին հուսացյալ՝ հավատաց իր հոգու լույսին, իր փրկությանն ու վերածննդին: Միշտ հավատաց եւ իր պատմությամբ ու իր թողած ժառանգությամբ վկայեց, որ հարուցյալ է Քրիստոս, եւ հարուցյալ է Քրիստոսին հաջյալ վատացողը: Այս հավատով վերապրեցինք մեր պատմության ամենամեծ ողբերգությունը՝ մեր ժողովրդի ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում:*

*Առաջին համաշխարհային պատերազմի թոհ ու բոհի մեջ երիտթուրքական իշխանությունները ժամանակը պատեհ նկատեցին՝ ավարտին հասցնելու հայության բնաջնջման թուրքական պետության որդեգրած քաղաքականությունը եւ ընդմիշտ լուծելու հայկական հարցը: Արեւմտյան Հայաստանում՝ մեր Հայրենիքի մեծագույն հատվածի վրա եւ կայսրության հայաշատ այլ բնակավայրերում իրականացվեցին անզեն հայ բնակչության կազմակերպված ջարդեր: Մեր ժողովուրդը մահվան էր դատապարտվել միայն հայ եւ քրիստոնյա լինելու համար, քանզի հայ մնալ ու քրիստոնյա, նշանակում էր շարունակել լինել բնիկ ու տոհմիկ ժողովուրդը Հայաստան երկրի:*

*1915 թվականին ավերն էր թագավորում, սարսափն ու մահը՝ հայոց բնակավայրերում: Փլվում էր տունը հայի գլխին, այրվում էր հողը իր մշակի ոտքի տակ, ակոսը գերեզման էր դառնում, եկեղեցին՝ անբարբառ հուշարձան: Եփրատի ափերից մինչեւ Արաքսի հովիտներ, Սեւ ծովից մինչեւ Միջերկրական՝ ծորերը լցվեցին հայ մարդկանց դիակներով, գետերը՝ արյունով: Թալանված ու տանջահար անզեն ժողովուրդը՝ կին, մանուկ ու ծեր քշվեցին անջուր անապատ, եւ նրանց վերջին աղոթքի ունկնդիրը եղավ տոթակեզ քամին: Անլուր ջարդերին զոհ գնաց մեկ ու կես միլիոն հայություն, որը հողագործ էր, արհեստավոր, կառուցող շինարար, վաճառական, բժիշկ ու գիտնական:*

*20-րդ լուսավորյալ դարը եղեռնով սկսվեց մեր ժողովրդի համար, որ նոր ժամանակներում հույս ուներ գտնել անձի ապահովություն, մարդկային իրավունքի պաշտպանություն եւ խաղաղ կյանք: Այս էր Հայկական հարցի բովանդակությունը: Սահմանադրական իրավունքներից խոսող երիտթուրքական իշխանությունները ամեն բան հաշվարկել էին՝ չկա ժողովուրդ, չկա Հայկական հարց, չկա ժառանգորդ, չկա՝ պահանջատեր: Չարահնար ծրագրի հեղինակները վստահ էին, որ խպառ պիտի բնաջնջվի հայությունը, երկրե-երկիր ցրվելով՝ անհիշատակ ու անհետ պիտի վերանա պատմության ասպարեզից: Ամեն բան հաշվարկել էին, բայց ոչ՝ Աստուծո նախախնամությունը եւ Աստծուն հուսացյալ ժողովրդի ապրելու եւ արարելու կամքն ու զորությունը:*

*Նույն ջարդարարների արշավանքներին դիմակայելով՝ ընդդեմ մահու խիզախումով հերոսացած՝ փրկվեց Արեւելյան Հայաստանի փոքրիկ հողակտորը, որի վրա հաստատվեց հայոց նոր պետականությունը: Մեր ազատ երկրի դրոշի ներքո՝ Ծիծեռնակաբերդի բարձունքում, արարատահայաց վեր է հառնել Մեծ Եղեռնի հուշակոթողը, որտեղ լուսեղեն զորաց գնդերով հոգիներն են երկրի վրա մեր հողը սրբացրած եւ երկնքում Աստված փառաբանող մեր նահատակների, եւ որտեղ ձեռքձեռքի, սիրտ-սրտի միասին է ազգս հայոց: Հավերժատես այս բարձունքին մեր ցավն ու արդար ցասումը զորություն դարձան, եւ ծնունդ առավ Արցախյան հաղթանակող ոգին:*

*Շարունակությունը՝ էջ 2*

## Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի սրբատառ կոնդակը...

*Սկիզբը՝ էջ 1*

*Փառք քեզ, ժողովուրդ սիրելի, որ չընկճվեցիր մահվան բրբիջից: Խաչդ ուսած՝ անցար Գողգոթայի ճանապարհներով եւ հարություն առար հաղթանակած:*

*Փառք քեզ, ժողովուրդ սիրելի, որ վերքը սրտիդ բնավեր տունդ վերստին կառուցեցիր Հայրենիքիցդ հեռու եւ մոտիկ բազում երկրներում եւ շարունակեցիր հայ մնալ ու քրիստոնյա: Արարող հանճարով շարունակեցիր հաց ստեղծել, կառուցել, գիտության ու մշակույթի բարձունքների հասնել եւ այսպես ճանաչված ապրել:*

*Երիցս փառք քեզ, ժողովուրդ սիրելի, «Զի ինձ կենանք Քրիստոս է» հավատով քայլեցիր դեպի քո կյանքի նոր այգաբացը եւ հուսացիր իրավունքի ու արդարության դարի նոր առավոտը ու այս ճանապարհին մնացիր կանգուն ու արի:*

*Չենք մոռացել ու չենք կարող մոռանալ Հայոց Ցեղասպանությունը, մեր պատմության այս մեծագույն ողբերգությունը: Չենք մոռացել ու չենք կարող մոռանալ ավերակված խնկաբույր երկիրը մեր, հայրենական սրբություններն ու բազմադարյա հիշատակները:*

*Մեզ հետ են մեր բյուրավոր նահատակները՝ հայտնի ու անհայտ անուններով: Նրանց հիշատակի առջեւ միասին ենք միշտ: Մեզ հետ են ի պաշտպանություն մեր ժողովրդի բողոքի ազնիվ ձայն բարձրացրած մեծ մարդասերները, որոնց շուրթերից մարդկության խիղճն էր խոսում Եղեռնի մահասփյուռ օրերին: Մեզ հետ են այն ժողովուրդները, ովքեր մարդասիրաբար ապաստան տվեցին ջարդերից փրկված բեկորներին հայության:*

*Անցել են ժամանակները, երբ մեր հայրերը չէին կարող ոգեկոչել հիշատակը մարտիրոսացած հայորդիների, երբ միայնակ էին ազգային ողբերգության ու վշտի մեջ: Այսօր շատ ազգեր ու պետություններ ճանաչում են մեր ժողովրդի հանդեպ գործված ոճիրը՝ իբրեւ հանցանք մարդկության ու մարդկայնության դեմ: 20-րդ դարի առաջին ցեղասպանությունը պիտի ճանաչվի ու դատապարտվի ողջ աշխարհի ու նաեւ Թուրքիայի կողմից, այն համոզումով, որ բռնություններն ու սպանությունները չեն կարող առաջնորդել մարդկության ճանապարհը: Խաղաղությունն ու ազատ կյանքը, եղբայրությունը մարդկանց ու ազգերի միջեւ, արդարեւ, երազն է բոլոր ժողովուրդների:*

*Մեծ Եղեռնի 90-ամյա տարելիցի առիթով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնությունն ու ողջույնն ենք բերում աշխարհասփյուռ սիրեցյալ մեր ժողովրդին: Ձեռք-ձեռքի ու սիրտ-սրտի միասին ենք հիշատակի առջեւ մեր անմեղ զոհերի, ովքեր իրենց աչքերը փակեցին մեր ժողովրդի վերածննդյան, մեր Հայրենիքի ազատության տեսիլքով: Հավատարիմ լինենք նրանց տեսիլքին: Որտեղ էլ ապրենք, փոխանցենք մեր զավակներին Արարատի պատկերը նվիրական, Լուսավորչի կանթեղն անմար եւ հայրենի մեր հողն ու երկինքը միավորող Սուրբ Էջմիածնի խորհուրդը հավերժական: Որտեղ էլ ապրենք, համակ նվիրումով տեր կանգնենք մեր ազգային իղձերին ու ձգտումներին: Պաշտպանենք Արցախի ազատության իրավունքի, Հայոց Ցեղասպանության ճանաչման մեր արդար դատը: Միասնական ուժերով կառուցենք նոր կյանքը Հայաստանի ու Արցախի եւ հայրենի հողից առած ավյունով զորացյալ ու ծաղկուն պահպանենք Հայ Սփյուռքը: Ապրենք «Զի ինձ կենանք Քրիստոս է» վստահությամբ եւ հավատով, որ Աստված համախմբելու է մեզ Արարատի փեշերին: Տերը կամեցավ ազգիս հարությունը, որպեսզի հարատեւի Ավետարանի լույսով ու կյանքի սիրով աշխարհին բացված հայի հոգին, եւ հայերեն աղոթքը շարունակի երկինք բարձրանալ՝ հայցելով աշխարհին խաղաղություն եւ ի մարդիկ հաճություն: Հավատանք ի Քրիստոս սիրով զորացյալ առաքինագործ հոգու շնորհներին մեր կյանքում եւ հայոց միացյալ ու պայծառ գալիքին: «Հաստատուն կացէք, գոտևի կալջիք, պնդեալ զմէջս ձեր ճշմարտութեամբ, եւ զգեցեալ զզրահսն արդարութեան» (Եփես. Զ 14):*



## Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԵՎ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԸ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ 90-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԻՆ

Մեծարգո Նախագահ Հայաստանի Հանրապետության,

Համաժողովի պատվարժան մասնակիցներ եւ հյուրեր:

Ողջունում ենք Ձեզ Հայոց Ցեղասպանության 90-ամյա տարելիցին նվիրված միջազգային այս համաժողովի առիթով եւ բերում օրհնություն համայն հայոց հոգեւոր կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից:



Մեր ժողովրդի համար այսօր մեծ մխիթարություն է, որ տասնամյակներ անց միջազգային հանրության ուշադրության կենտրոնում է 20-րդ դարասկզբին Օսմանյան Թուրքիայում իրականացված հայկական Ցեղասպանությունը, որը բազմաթիվ փորձություններ տեսած մեր ժողովրդի պատմության ամենաողբերգական էջն է:

Քաղաքակրթության առաջընթացի, լուսավորության դարում մեր ժողովուրդը հույս ուներ գտնել անձի ապահովություն, մարդկային իրավունքի պաշտպանություն եւ խաղաղ ու ստեղծագործ կյանքի պայմաններ, բայց բնաջնջվեց Թուրքիայի տարածքում գտնվող իր պատմական Հայրենիքի մեծագույն հատվածի վրա եւ թուրքական կայսրության հայաշատ բնակավայրերում: Կազմակերպված կոտորածներն ու տարագրությունը վերածվեցին մահվան նախճիրի. ինչ չէր հասցնում սուրը, ավարտում էին սովն ու համաճարակները: Փաստական վկայությունների պակաս չեն զգում այս իրադարձությունների ուսումնասիրությունները: Այսօր մի շարք պետությունների կողմից Հայոց Ցեղասպանության ճանաչումն ու դատապարտումը՝ իբրեւ մարդկության դեմ գործված մեծագույն ոճիր, վստահություն է ներշնչում Մեզ, որ այն պիտի գտնի համընդհանուր ճանաչում ու արդար գնահատական:

Հայ ժողովրդի համար Ցեղասպանության մեծագույն աղետով սկսված 20-րդ դարը մարդկության պատմության մեջ մնաց իբրեւ երկու համաշխարհային պատերազմների դար: Նույն այն մտածողությամբ, որով կազմակերպվեցին սոսկալի, վայրագ ջարդերը հայերի, ծնունդ առան համակենտրոնացման ճամբարներն ու գազախցիկները: Նոր դար է սկսվում եւ պիտի սկսվի նոր մտածողությամբ՝ բռնությունն ու ոճիրը մերժող եւ մարդասիրական արժեքները հաստատող: Դար, որի մեջ, ինչպես սաղմոսերգուն է ցանկանալով ցանկանում, ողորմությունն ու ճշմարտությունը հանդիպեն եւ արդարությունն ու խաղաղությունը համբուրվեն: Մենք՝ մարդիկ, պիտի կերտենք այդ դարը: Պատմությունը վկայում է, որ ավերներից սովորաբար ավելի հեշտ վերականգնվում են քաղաքները, բարեփոխվում են կյանքի պայմանները, քան փոխվում են մարդկանց հոգեբանությունն ու մտածողությունը, կյանքի բարոյական չափորոշիչները, որոնք եւ են իրական երաշխիքները առաջընթացի եւ հույսը՝ գալիքի: Թուրքիայի համար նույնպես Հայոց Ցեղասպանության ճանաչումը պիտի դառնար մարդկային իրավանց եւ ժողովրդավարության իրական նվաճում, առանց որի Թուրքիան պիտի դժվարանա կառուցել ազատ, արժանապատիվ ու երջանիկ կյանք:

Սիրելիներ, բոլոր ժամանակների գերագույն ձգտումն ու նպատակը, գերագույն ջանքը պիտի լինի, որպեսզի հաղթանակող մնան մարդասիրությունը, իրավունքն ու արդարությունը՝ ընդդեմ ատելության ու թշնամության, ահաբեկչության ու պատերազմի եւ այլ չարիքների, որոնք տեղ ունեն արդի մեր իրականության մեջ, դարի մարտահրավերներն են մարդկության առջեւ ծառացած:

Միջազգային ներկայացուցչական այս համաժողովը նույնպես կոչված է մեր ժամանակի մարտահրավերներին անդրադառնալու: Հայոց Ցեղասպանության 90-ամյակի հիշատակումը սոսկ առիթ չէ, այլ նաեւ՝ հրամայական՝ այս առումով: Մեր մաղթանքն է, որ համաժողովը իր նպաստը բերի ավելի լավ, ավելի բարեգործ աշխարհ ունենալու մարդկության հույսերի ու ձգտումների մարմնավորման գործընթացներում:

Մեր գնահատանքն ենք բերում հավաքի կազմակերպիչներին եւ Ձեզ բոլորիդ եւ ամենայն հաջողություններ մաղթում համաժողովի աշխատանքներին:

Թող Տերը օրհնի մեզ եւ օրհնի խաղաղության ու արդարության ու ազգերի միջեւ եղբայրության ճանապարհները:

Աղոթք եւ օրհնություն մեկ ու կես միլիոն անմեղ զոհերի հիշատակին:

Աստծո ողորմությունը, շնորհն ու սերը թող լինեն աշխարհի եւ մեզ հետ: Ամեն:

### ՄԱՍԼՈ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

## Ամենայն Հայոց Կաթողիկոսը շնորհավորական գիր է հղել Հռոմի նորընտիր Սրբազան Քահանայապետին

Ապրիլի 20-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը շնորհավորական ուղերձ է հղել՝ Նորին Սրբություն Բենեդիկտ ԺԶ Պապին՝ Հռոմի եպիսկոպոս եւ Կաթոլիկ Եկեղեցու առաջնորդ ընտրվելու առիթով:

Հայրապետական շնորհավորական գրի մեջ մասնավորաբար ասվում է.

*«Ձերդ Սրբություն, սիրեցյալ եղբայր ի Քրիստոս*

*Կիսելով հավատավոր Ձեր հոտի ուրախությունը՝ Մենք, որպես Ամենայն Հայոց Կաթողիկոս, եղբայրական Մեր սերն ու շնորհավորանքն ենք հղում Ձերդ Սրբությանը, Հռոմի եպիսկոպոս եւ Կաթոլիկ Եկեղեցու առաջնորդ ընտրվելու առիթով:*

*Օրհնյալ է երանաշնորհ Մեր նախորդ Հայրապետների լույս հիշատակը, որոնց նվիրյալ ջանքերի շնորհիվ եղբայրական սերտ համագործակցությունը մեր եկեղեցիների միջեւ զգալի առաջընթաց եւ զարգացում արձանագրեց: Այս առումով նշանակալի վկայություններ էին երջանկահիշատակ Հովհաննես Պողոս Բ Պապի պատմական այցը Հայաստան եւ Հայոց Ցեղասպանությունը դատապարտող մեր համատեղ հայտարարությունը, որը մխիթարություն եղավ մեր ժողովրդին՝ հատկապես այս օրերին, երբ ազգովի հիշատակում ենք Մեծ Եղեռնի 90-ամյակը:*

*Սիրեցյալ եղբայր ի Քրիստոս, վստահ ենք, որ Ձեր գահակալության ընթացքում մեր եկեղեցիների գործակցությունը առավել պիտի զորանա՝ ի բարօրություն մեր հավատացյալների: Մեր աղոթքն է, որ Հարուցյալ Տիրոջ սերը եւ խաղաղությունը ամենուր եւ ամենայն ժամ լինեն մեզ հետ՝ մարդկանց սրտերում զորացնելով հավատն առ բարին եւ հույսը գալիքի հանդեպ:*

*Այլեւ հայցում ենք, որ Ամենակարող Աստված պարգեւի Ձերդ Սրբությանը քաջառողջություն, ուժ, անսպառ եռանդ եւ իմաստություն՝ հաջողություններով եւ իրագործումներով պսակելով Ձեր նվիրյալ ջանքերը Հռոմեական Կաթոլիկ Եկեղեցու Հովվապետի բարձր ու պատասխանատու առաքելության մեջ»:*

## Հայ Եկեղեցու պատվիրակությունը վերադարձավ Վատիկանից

Ապրիլի 26-ին Հռոմից վերադարձավ Մայր Աթոռի միաբան Տ. Ներսես արք. Պոզապալյանը: Նա ապրիլ 23-ին Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու պատվիրակության կազմում մեկնեց Վատիկան՝ մասնակցելու Հռոմի Քահանայապետ եւ Կաթոլիկ Եկեղեցու առաջնորդ Նորին Սրբություն Բենեդիկտոս ԺԶ նորընտիր Պապի գահակալության արարողությանը, որը տեղի ունեցավ ապրիլի 24-ին: Պատվիրակությունը գլխավորում էր Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարք Ամենապատիվ Տ. Մեսրոպ արքեպիսկոպոս Մութաֆյանը:

Հաջորդ օրը՝ ապրիլի 25-ին, Ուղղափառ Եկեղեցիների, ինչպես նաեւ քրիստոնեական այլ հարանվանությունների պատվիրակությունների ընդունելության ժամանակ, Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարք Տ. Մեսրոպ արք. Մութաֆյանի Երուսաղեմ մեկնելու պատճառով, Ամենայն Հայոց Կաթողիկոսությունը ներկայացրեց Տ. Ներսես արք. Պոզապալյանը: Սրբազան հայրը նորընտիր գահակալին փոխանցեց Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի շնորհավորանքներն ու բարեմաղթանքները: Բենեդիկտոս ԺԶ Պապը շնորհակալություն հայտնեց Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու պատվիրակությանը մասնակցության եւ աղոթակցության համար եւ իր եղբայրական ջերմ ողջույնները փոխանցեց Ամենայն Հայոց Հայրապետին: Նորին Սրբությունը հանդիպման ժամանակ նաեւ նշեց, որ հիշել է ապրիլի 24-ի մասին եւ աղոթել Հայոց Ցեղասպանության զոհերի հոգիների համար:

## ՄԱՄԼՈ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

# 1915 թ. Մեծ Եղեռնի զոհերի հիշատակին նվիրված ոգեկոչումի եւ հոգեհանգստյան արարողություններ Ծիծեռնակաբերդի հուշահամալիրում, Մայր Աթոռ Ս. Էջմիածնում եւ Երեւանի Ս. Գր Լուսավորիչ մայր եկեղեցում

**1915** թ. Մեծ Եղեռնի զոհերի հիշատակին նվիրված ոգեկոչումի եւ հոգեհանգստյան արարողություններ Ծիծեռնակաբերդի հուշահամալիրում, Մայր Աթոռ Ս. Էջմիածնում եւ Երեւանի Ս. Գր Լուսավորիչ մայր եկեղեցում

Ապրիլի 24-ին՝ 1915 թ. Հայոց ցեղասպանության հիշատակության Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանի հետ այցելեց Մեծ Եղեռնի զոհերի հիշատակին նվիրված Ծիծեռնակաբերդի հուշահամալիր, որտեղ Ամենայն Հայոց Հայրապետի հանդիսապետությամբ կատարվեց հոգեհանգստյան արարողություն:



Արարողությանը ներկա էին նաեւ ՀՀ ԱԺ նախագահ Արթուր Բաղդասարյանը, ՀՀ վարչապետ Անդրանիկ Մարգարյանը, Սահմանադրական Դատարանի նախագահ Գագիկ Հարությունյանը, պետական եւ հոգեւոր այրեր, Հայաստան ժամանած քույր եկեղեցիների բարձրաստիճան հոգեւորականներ ու պատվիրակություններ, օտարերկրյա դիվանագետներ:

Մայր Աթոռ Սբ. Էջմիածնում մատուցվեց Ս. Պատարագ: Պատարագիչն էր Մայր Աթոռի միաբան Տ. Փառեն եպս. Ավետիքյանը:

Պատարագի ընթացքում պատարագիչ սրբազան հայրն ընթերցեց Վեհափառ Հայրապետի



սրբատառ կոնդակը՝ նվիրված Հայոց Ցեղասպանության 90-րդ տարելիցին:

Հավարտ Ս. Պատարագի, Եղեռնի 90-ամյա տարելիցի առիթով Հայաստան ժամանած քույր եկեղեցիների բարձրաստիճան հոգեւորականները եւս, հանուն իրենց եկեղեցիների պետերի, խոսք ուղղեցին համայն հայ ժողովրդին՝ հայտնելով իրենց սրտակցությունը:

«Մոսկվայի եւ Համայն Ռուսիո Պատրիարք Ալեքսի Բ-ի անունից թույլ տվեք ողջունել բոլորիդ, որ հավաքվել եք այսօր այստեղ՝ հիշատակելու սարսափելի ողբերգությունը, որ ապրեց հայ ժողովուրդն իննսուն տարի առաջ:

Ռուս ժողովուրդը մի ասացվածք ունի. «Ընկերը ճանաչվում է դժբախտության մեջ»: Ռուսաստանը եւ Ռուս Ուղղափառ Եկեղեցին մշտապես կիսել են եղբայր հայ ժողովրդի եւ Հայ Առաքելական Եկեղեցու ուրախությունն ու դժբախտությունը:

Այս օրերին Ռուս Ուղղափառ Եկեղեցու պատվիրակությունը, Մոսկվայի եւ Համայն Ռուսիո Սրբազան Պատրիարք Ալեքսի Բ-ի օրհնությամբ, գտնվում է Հայաստանում՝ կիսելու հայ ժողովրդի վիշտն այն ողբերգական իրադարձությունների, որ տեղի ունեցան շուրջ իննսուն տարի առաջ, եւ որոնք, չնայած այսքան երկար ժամանակի, ժողովրդի հոգիներում եւ պատմական գիտակցության մեջ խոր սպիներ են թողել:

1915 թվականի ցեղասպանությունը դարձավ հայ ժողովրդի մեծագույն ողբերգությունը: Այն նաեւ եղավ մարդկության եւ մարդկային կյանքի դեմ գործված մեծագույն հանցանքներից մեկը արդի պատմության մեջ: Յուրաքանչյուր մարդկային կյանք Աստծո մեծագույն պարգեւն է, եւ այն ոչնչացնելը մեծագույն մեղք է: Սակայն, երբ խոսքը 1,5 մլն. սպանված անմեղ կյանքերի մասին է, ապա ողբերգությունն ու ցավը անսահման են դառնում:

Հայ ժողովրդի հանդեպ ունեցած մեր կարեկցանքը մեր ազգի սեփական պատմական փորձառության վրա է հիմնված: Ռուս ժողովուրդն անցյալ դարում ապրեց բազում ողբերգություններ, որոնք խլեցին միլիոնավոր կյանքեր: Ռուս ժողովրդի հետ միասին տառապեց նաեւ Ռուս Ուղղափառ Եկեղեցին՝ իր պատմության ընթացքում քրիստոնեության դեմ տեղի ունեցած ամենաուժգին հալածանքներից մեկն ապրելով: Սակայն հալածանքների արդյունքում նա ծեռք բերեց բյուրավոր նոր մարտիրոսներ, որոնց արյունը, ինչպես եւ քրիստոնեության առաջին դարերում, սկիզբ տվեց եկեղեցու եւ ժողովրդի այսօրվա հոգեւոր կյանքի վերածննդին: Նույնն է եւ Հայաստանի պարագայում: Իննսուն տարի առաջ հեղված իր որդիների ու դուստրերի արյունը թո՛ղ պարգեւի նոր բարձունքներ եւ նպաստի հայ ժողովրդի բարգավաճմանը: Թո՛ղ ցեղասպանության հիշողությունը միշտ մնա հայերի սրտերում՝ նպաստելով հայ ժողովրդի միաբանությանն ու նրա հոգեւոր զորացմանը»,- ասաց Ռուս Ուղղափառ Եկեղեցու Մոսկվայի Պատրիարքության միջեկեղեցական հարաբերությունների բաժնի փոխնախագահ, Մոսկվայի թեմի առաջնորդական փոխանորդ Մարկ եպս. Եգորյեւսկին:

Այնուհետեւ Հույն Ուղղափառ Եկեղեցու եպիսկոպոս Իոաննիսն ընթերցեց Աթենքի եւ Համայն Հունաստանի Արքեպիսկոպոս Քրիստոդուլոսի գիրը՝ ուղղված Ամենայն Հայոց Հայրապետին: «Խոր ցավի զգացումներով Հունաստանի Եկեղեցին եւ իր հավատացյալները մասնակցում են 20-րդ դարի ամենասարսափելի եղեռնագործություններից մեկի՝ Օսմանյան կայսրությունում հայերի դեմ իրագործված նախճիրի, որին զոհ գնաց ավելի քան 1,5 մլն. մարդ, 90-ամյակի հիշատակության միջոցառումներին: 2 մլն. հայ բնակչության կեսից ավելին կա՛մ սպանվեց փողոցներում եւ իրենց տներում, կա՛մ էլ ուղարկվեց աշխատանքային գումարտակներ, որտեղից այլեւս չվերադարձան: Չնայած դրանք տեղի ունեցան հիմնականում 1915-1918 թվականներին՝ երիտթուրքերի կողմից, սակայն դրանց նախորդել էին սուլթանի կառավարության իրագործած հալածանքները 1890, 1893, 1895 եւ 1896 թվականներին՝ սկսած Տրապիզոնից մինչեւ Կիլիկիա (1921 թ.): Այս հալածանքները պատճառ դարձան, որպեսզի հայկական սփյուռքն ահռելի չափերի հասնի: Հայտնի է, որ միայն Հունաստանը, չնայած այն ծանր իրավիճակին, որում գտնվում էր, ընդունեց եւ ապաստան տվեց 50000 հայ գաղթականների: Այդ ժամանակվանից ի վեր հայ համայնքը մեր երկրում ապրել է մեզ հետ կողք կողքի՝ խաղաղ ու ներդաշնակ, եւ մշտապես իր դրական նպաստը բերել հույն հասարակության կյանքի բոլոր բնագավառներում: Անշուշտ սա նորություն չէ, քանի որ մեր երկու հինավուրց ժողովուրդների հարաբերությունները շատ վաղ անցյալ ունեն, որոնց արմատները հասնում են մինչեւ նախապատմություն:

... Փաստորեն, մեր երկու ժողովուրդները ընդհանուր պատմական ուղի են անցել եւ ընդհանուր հալածանքներ կրել իրենց քրիստոնեական հավատքի եւ ինքնության պատճառով: Հայտնի է, որ նաեւ գրեթե մեկ միլիոն հույներ են սպանվել Փոքր Ասիայում՝ Օսմանյան եւ Նոր թուրքերի ծեռքով: Այս պատճառով է, որ հույն ժողովուրդը, թերեւս ավելի, քան մյուսները, գիտի, թե նահատակված հայ ժողովուրդը ինչեր է կրել մեր ընդհանուր հալածիչների կողմից: Այս պատճառով է, որ մեր կարեկցանքն այսքան ուժգին է այս առիթով:

Մենք միանում ենք ազգային բնաջնջմանն ու ազգայնամոլությանը զոհ գնացած բոլոր անմեղ զոհերի հոգեհանգստյան աղոթքին: Թո՛ղ նրանց մահը զուր անցած չլինի. թո՛ղ նրանց զոհաբերությունը ժամանակակից մարդուն հիշեցնի մոլեռանդության եւ անհանդուրժողականության սարսափելի հետեւանքների մասին: Թո՛ղ դա ողջ մարդկությանը մղի՝ ձգտելու խաղաղության, հանդուրժողականության եւ փոխըմբռնման»:

Դեյվիդ եպս. Թասթինը ընթերցեց Քենթրբերիի Արքեպիսկոպոս Ռոուան Վիլյամսի ուղերձը. «Միասիրտ ցավով մենք կանգնած ենք բոլոր հայերի կողքին իննսուն տարի առաջ տեղի ունեցած ցեղասպանության զոհերի հիշատակման այս պահին:

Քսաներորդ դարի ողբերգությունը 1915 թվականի արյունահեղությունն էր, որից մարդկությունը չկարողացավ քաղել դառը դասեր... Այն փաստը, որ շատերն այդ նույն ճակատագրին արժանացան այս վերջին դարում, խոսում է այն մասին, որ ոչ մի անձի մահ չի ջնջում իր արածը, այլ ամեն մի հերթական ցեղասպանություն նախատիպ է մեզ համար եւ պահանջ՝ մեղքի ընդհանուր խոստովանության:



Ինչպես գրել է երջանկահիշատակ Գարեգին Ա Ամենայն Հայոց Հայրապետը. «Քրիստոնյա Հայաստանի ամբողջ պատմության ընթացքում ցնցող է նահատակության համարյա չընդհատվող շղթան»: Սա ինքնին նկատել էր տալիս, որ «Դիմացկունությունը հայ քրիստոնեական վկայության էությունն է»: Այս պատմական վկայության խորքերից եւ 1915 թվականի ցեղասպանության սարսափից շողարձակում է Քրիստոսի անմար լույսը»:

Եվրոպայի Եկեղեցիների Կոնֆերանսի նախագահ վեր. Ժան Առնոլդ դե Կլերմոնն էլ հռչակեց Հայոց Ցեղասպանության 90-ամյակի առիթով կատարված՝ Եվրոպայի Եկեղեցիների Կոնֆերանսի (ԵԵԿ) նախագահության հայտարարությունը:

Այնուհետեւ Մայր տաճարի հարեւանությամբ՝ ի հիշատակ Եղեռնի նահատակների կանգնեցված Աղոթքի եւ ուխտի խաչքարի մոտ, Գարեգին Բ Ամենայն Հայոց Հայրապետի նախագահությամբ կատարվեց հոգեհանգստյան արարողություն:

Երեկոյան Երեւանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցում, հանդիսապետությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, կատարվեց հոգեհանգստյան էկումենիկ արարողություն՝ Հայոց Մեծ Եղեռնի նահատակների հոգիների հանգստության համար:

Արարողությունից առաջ Նորին Սրբությունն իր հայրապետական խոսքն ուղղեց ներկաներին.

«Սիրելի հավատացյալ ժողովուրդ: Հիշատակի եւ ոգեկոչման օրեր ենք ապրում՝ նվիրված Հայոց Ցեղասպանության 90-ամյակին: Մեր պատմության մեծ ողբերգության տարելիցի առիթով մեզ հետ են եւ խոնարհումի ու հարգանքի իրենց տուրքն են բերում շատ ազգերի ներկայացուցիչներ եւ Հայոց Ցեղասպանությունը իրենց որոշումներով դատապարտող շատ պետություններ:

90-րդ ապրիլ 24-ն է այսօր: Ողջ աշխարհում հայոց եկեղեցիների սուրբ խորաններից սրբազան պատարագի արարողությամբ աշխարհասփյուռ ազգս հայոց աղոթք է բարձրացնում երկինք եւ աշխարհի բոլոր կողմերում խոնարհվում Մեծ Եղեռնի հուշակոթողների առջեւ: Ծիծեռնակաբերդի բարձունքում հայոց պետական ավազանու, բազմահազար մեր ժողովրդի, ազգաց ու պետությունների ներկայացուցիչների հետ խոնարհվեցինք մեր նահատակների անմար հիշատակի առջեւ եւ աղաչական ամենաջերմ զգացումով երեկոյան ժամերգության այս խաղաղ պահին վերստին հայց ենք բարձրացնում առ Աստված նրանց հոգիների հանգստության համար: Աղոթում ենք, որ Բարձրյալն Աստված խաղաղության ու բարու մեջ պահպանի աշխարհը, որպեսզի ոչ մի ժողովուրդ չապրի ցեղասպանության ողբերգությունը: Աղոթում ենք կյանքի շինության ու առաջընթացի եւ ազգերի եղբայրության համար, որ Աստծո արարչագործության իմաստն ու նպատակն է, քանզի կյանքի ճանապարհներն են Տիրոջ ճանապարհները: «Նա ամեն ինչ հաստատել է կյանքի համար, եւ աշխարհի գործերը փրկության համար են» (Իմաստ. Ող. Ա 14):

Այս հավատով մեր ժողովուրդը վերապրեց Ցեղասպանության աղետը եւ իր վերածնված կյանքի հույսերով է հիշատակում նրա 90-ամյա տարելիցը: Մեր ժողովուրդը հավատում է այն արդար օրվա արշալույսին, երբ համընդհանուր ճանաչում եւ դատապարտում կգտնի 20-րդ դարի առաջին ցեղասպանությունը:

Շարունակությունը՝ էջ 4

## ՄԱՄԼՈ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

# 1915 թ. Մեծ Եղեռնի զոհերի հիշատակին նվիրված ոգեկոչումի եւ հոգեհանգստյան արարողություններ Ծիծեռնակաբերդի հուշահամալիրում, Մայր Աթոռ Ս. Էջմիածնում եւ Երեւանի Ս. Գր Լուսավորիչ մայր եկեղեցում



*Սկիզբը՝ էջ 3*

*90 տարի առաջ երիտթուրքական իշխանությունները որոշեցին հայ բնակչության բնաջնջման ճանապարհով վճռել «Հայկական հարցը»: Առաջին աշխարհամարտի պատերազմական խառնակ ու շփոթ իրավիճակները հարմարագույն ժամանակ դարձան կազմակերպելու համար հայոց ջարդերն ու տեղահանությունները: Բնիկ իր ժողովրդից դատարկվեց Արեւմտյան Հայաստանը: Կորցրեցինք երեք տասնյակից ավելի թեմեր, հազարավոր եկեղեցիներ ու եկեղեցականներ: Ցրվեց բեկորված ժողովուրդը աշխարհում: Այսօր, սակայն, միայն Եղեռնի ցավը չէ մեր հոգիներում, այլեւ հպարտության ու մխիթարության զգացումը, որ վշտակոտոր ու տարագիր, օտար ափերում հաստատված հայությունը, հավատն ու հույսը հոգում, ոտքի կանգնեց, հայրենի տունը կառուցեց ու բարձրացրեց իր հոգեւոր ազգային կյանքը:*

*Հպարտ ու մխիթարված ենք հիշելով, որ Եղեռնի աղետալի օրերին, ապավինած Աստծուն, մեր ժողովուրդը իր ուժերը համախմբեց նույն ջարդարարներից պաշտպանելու համար Արեւելյան Հայաստանի այս փոքրիկ հողակտորը, որի վրա ծնունդ տվեց իր նոր պետականությանը՝ Հայաստանի Առաջին Հանրապետությանը: Աստված կամեցավ, որ ապրի չարահնար ծրագրով մահվան դատապարտված մեր ժողովուրդը, որպեսզի այսօր մարդկային խղճի ու դատի առջեւ բարձրացնի հարցը. ո՞ւր է 3 միլիոն հայությունը, որ ապրում էր Թուրքիայի տարածքում՝ մեծամասամբ հայրենի հողի վրա: Վաղեմություն չունի Ցեղասպանությունը եւ չի կարող ունենալ, քանզի մարդկությունը չի կարող ընտրել մահվան ճանապարհները: Կյանքի ճանապարհներն են մարդկության ճանապարհները:*

*Մեր ժամանակն էլ պատասխանատվություն է կրում մեր այսօրը վաղվան թողնելու հարցում: 20-րդ դարի առաջին ցեղասպանության ճանաչումը պիտի նպաստի արդի մեր իրականության մեջ բռնությունների, մարդու եւ ազգի իրավունքների ոտնահարման անթույլատրելիության գիտակցության ամրապնդմանը եւ պիտի նպաստի մարդասիրության արժեքների զորացմանը:*

*Որպես Ամենայն Հայոց Հայրապետ՝ հանուն մեր ժողովրդի այսօր Մենք երախտագիտության խոսք ենք ուղղում բոլոր երկրներին ու ժողովուրդներին, որոնք մեր կյանքի ամենադժնդակ ժամանակներում ընդունեցին եւ իրենց կողքին տեղ տվեցին ջարդերից փրկված հայությանը: Նաեւ երախտագիտության Մեր խոսքն ենք ուղղում Հայոց Ցեղասպանությունը ճանաչած պետություններին, պետական ու հասարակական կազմակերպություններին եւ անձերին, ովքեր ջանքեր են ներդնում այդ ճանաչումը համընդհանուր դարձնելու համար: Այսօր խոնարհումով ու աղոթքով ենք հիշում այն անհատներին, ովքեր ժամանակին իրենց բողոքի ձայնը բարձրացրեցին՝ հանուն բնաջնջվող մեր ժողովրդի:*

*Շնորհակալության Մեր խոսքն ենք ուղղում Հայոց Մեծ Եղեռնի 90-ամյակի առիթով իրենց հարգանքի տուրքը մատուցելու համար Հայաստան ժամանած քույր Եկեղեցիների ներկայացուցիչներին, պետական պատվիրակներին, հասարական կազմակերպությունների անդամներին, տարբեր երկրներից ժամանած մտավորականներին, նաեւ՝ Հայաստանում հավատարմագրված դեսպաններին ու դիվանագիտական առաքելությունների ներկայացուցիչներին, ովքեր իրենց հարգանքի տուրքը մատուցելու եւ մեզ հետ աղոթելու համար ներկա են այսօր հոգեհանգստյան արարողությանը: Մեր սերն ու բարեմաղթանքն ենք բերում մեր ժողովրդի արիության ոգով ու կամքով ցեղասպանությունը վերապրած՝ այստեղ ներկա մեր զավակներին, որոնց վարձքը, Տիրոջ խոսքի համաձայն, շատ է երկնքում:*

*Թող Աստված ունկնդիր լինի անմեղ մեր նահատակների հոգիների հանգստության հայցով երկինք բարձրացող մեր աղոթքներին եւ օրհնի բոլոր ջանքերը ի սեր խաղաղության եւ արդարության, ի սեր կյանքի: «Նա ամեն ինչ հաստատել է կյանքի համար, եւ աշխարհի գործերը փրկության համար են» (Իմաստ. Սղ. Ա 14):*



*Շնորհը, ողորմությունը եւ օրհնությունը երկնավոր մեր Հոր թող լինի մեզ հետ եւ բոլորի: Ամեն»:*

Արարողության ընթացքում իրենց աղոթքը հնչեցրին նաեւ Եղեռնի 90-ամյա տարելիցի առիթով Հայաստան ժամանած այլ եկեղեցիների ներկայացուցիչներ՝ Մոսկվայի Պատրիարքության միջեկեղեցական հարաբերությունների բաժնի փոխնախագահ, Մոսկվայի թեմի առաջնորդական փոխանորդ Մարկ եպս. Եգորյեվսկին (Ռուս Ուղղափառ Եկեղեցի), Անդրկովկասում պապական նվիրակ Կլաուդիո արք. Գուջերոտտին (Հռոմեական Կաթոլիկ Եկեղեցի), Մալաթիուս արքեպիսկոպոսը (Ասորի Ուղղափառ Եկեղեցի), Կորնելիու եպս. Բարլադեանուլը (Ռումին Ուղղափառ Եկեղեցի), Թերմոպիլեի Իոաննիս եպիսկոպոսը (Հույն Ուղղափառ Եկեղեցի), Դեյվիդ եպս. Թասթինը (Անգլիկան Եկեղեցի), ինչպես նաեւ Եվրոպայի Եկեղեցիների Կոնֆերանսի նախագահ վեր. Ժան Առնոլդ դե Կլերմոնը:

Հոգեհանգստյան արարողության ավարտին Նորին Սրբությունն օրհնեց Ցեղասպանությունը վերապրած հայաստանաբնակ տարեցներին:

Արարողությանը ներկա էին ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանը, ՀՀ ԱԺ նախագահ Արթուր Բաղդասարյանը, ՀՀ վարչապետ Անդրանիկ Մարգարյանը, Սահմանադրական Դատարանի նախագահ Գագիկ Հարությունյանը, պետական եւ հոգեւոր այրեր, օտարերկրյա դիվանագետներ եւ հավատավոր ժողովուրդը:

# ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ

## Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

### 19 ապրիլի

### ՌԴ Պերմի մարզի նահանգապետի պաշտոնակատարին



Վեհափառ Հայրապետը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում ընդունեց Ռուսաստանի Դաշնության Պերմի մարզի նահանգապետի պաշտոնակատար Օլեգ Չիրկունովին եւ նրա գլխավորած պատվիրակությանը՝ ՀՀ Տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների գործունեությունը համակարգող փոխնախարար Վաչե Տերտերյանի եւ ՀՀ Արտաքին գործերի փոխնախարար Գեղամ Ղարիբջանյանի ուղեկցությամբ:

Ողջունելով հյուրին՝ Նորին Սրբությունն ուրախություն հայտնեց, որ եղբայրական, բարեկամական կապերը շարունակում են առաջընթաց ապրել, զորանալ եւ արդյունավորվել:

Նորին Սրբությունը նաեւ գոհունակություն հայտնեց, որ Պերմի մարզում բնակվող հայորդիներն իրենց կարեւոր ներդրումն են ունենում մարզի տնտեսական եւ մշակութային կյանքում եւ իրենց ազնիվ աշխատանքով ու բարի ծառայություններով կարողացել են բարյացակամ վերաբերմունքի արժանանալ իշխանությունների կողմից:

Շնորհակալություն հայտնելով ընդունելության եւ ամենայն հայոց սրբավայր այցելելու հնարավորության համար՝ պրն. Չիրկունովն իր հերթին անդրադարձավ Ռուսաստանում հոգեւոր կյանքի զարթոնքին. «Մենք զգում ենք եւ հասկանում ենք, որ մեր ժողովուրդները շատ նման են ինչպես իրենց պատմությամբ, այնպես եւ հավատով: Ուստի պիտի ջանանք շարունակել ընթանալ եղբայրական հարաբերությունների ոգով՝ գործածելով այն ի շահ մեր երկրների»:

Հանդիպմանը խոսվեց նաեւ եկեղեցի-պետություն փոխհարաբերությունների, խոնարհված վանքերի եւ եկեղեցիների վերականգնման, ինչպես նաեւ Հայ Առաքելական ու Ռուս Ուղղափառ Եկեղեցիների միջեւ առկա ջերմ կապերի եւ համագործակցության մասին:

### ՀՀ-ում Կիպրոսի նորանշանակ դեսպանին

Վեհափառ Հայրապետը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում ընդունեց Հայաստանի Հանրապետությունում Կիպրոսի նորանշանակ արտակարգ եւ լիազոր դեսպան Լեոնիդաս Պանտելիդեսին:

Հանդիպման ընթացքում խոսվեց երկու ժողովուրդների միջեւ առկա ջերմ հարաբերությունների մասին: Կարեւոր նկատվեցին առկա կապերի հետագա սերտացումն ու համագործակցության ծավալումը: Վեհափառ Հայրապետը եւ Կիպրոսի դեսպանն անդրադարձան նաեւ եկեղեցի-պետություն հարաբերություններին:

## ՄԱՍՆԱԿԱՆ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

# ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ

## Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

Սկիզբը՝ էջ 4

21 ապրիլի

### Լեխ Վալենսային



Վեհափառ Հայրապետը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում ընդունեց Լեհաստանի նախկին նախագահ, Խաղաղության Նոբելյան մրցանակի դափնեկիր Լեխ Վալենսային՝ ՀՀ-ում Լեհաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Թոմաշ Նոուֆի ուղեկցությամբ:

Նորին Սրբությունն ուրախություն հայտնեց Լեխ Վալենսայի Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին այցելության առիթով՝ գոհունակությամբ անդրադառնալով հայ եւ լեհ ժողովուրդների բարեկամությանը, որ ձեւավորվել է դեռեւս միջնադարում՝ Լեհաստանում հայ համայնքի հաստատմամբ:

Հայոց Հովվապետը նաեւ իր երախտագիտությունը հայտնեց Լեհաստանի ժողովրդին եւ իշխանություններին, որոնք Մեծ Եղեռնի 90-ամյա տարելիցի նախաշեմին Լեհաստանի խորհրդարանում ճանաչեցին եւ դատապարտեցին Հայոց ցեղասպանությունը. «Այսօր Ձեր ներկայությամբ դուք հաստատում եք, որ ցեղասպանությունը ժամանակ, տարածություն եւ ազգություն չի ճանաչում, որ դա համամարդկային ոճիր է եւ դատապարտության է ենթակա բոլոր ժամանակներում»:

22 ապրիլի

### ՌԴ Դաշնային Ժողովի Պետական Դումայի փոխնախագահին

Վեհափառ Հայրապետը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում ընդունեց Ռուսաստանի Դաշնության Պետական Դումայի փոխնախագահ Գեորգի Բոոսին:



Նորին Սրբությունը գոհունակություն հայտնեց ՌԴ Դումայի կողմից կատարված հայտարարության համար, որով մեկ անգամ եւս դատապարտվեց Հայոց ցեղասպանությունը, եւ կոչ ուղղվեց ողջ միջազգային հանրությանը՝ հիշատակելու Եղեռնի 90-ամյա տարելիցը:

«Մենք վստահ ենք, որ կգան օրհնյալ ժամանակներ, երբ ցեղասպանություն, պատերազմ հասկացություններն այլեւս պատմության մեջ կմնան: ... Հուսով եմ, որ Հայոց ցեղասպանության դատապարտումը կօգնի վերստին գիտակցել, թե որքան փխրուն է այսօր մեր աշխարհը, կօգնի բարու իրագործմանը»,- մասնավորաբար ասաց Գեորգի Բոոսն իր խոսքում:

Հանդիպման ընթացքում անդրադարձ եղավ նաեւ երկու ժողովուրդների միջեւ առկա եղբայրական ջերմ հարաբերություններին, այլեւ Հայ Առաքելական եւ Ռուս Ուղղափառ Եկեղեցիների սերտ համագործակցությանն ու բարեկամությանը:

26 ապրիլի

### Կանադայի խորհրդարանի Համայնքների պալատի եւ կանադահայ համայնքի ներկայացուցիչներին

Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում ընդունեց Կանադայի խորհրդարանի Համայնքների պալատի ներկայացուցիչ, տրանսպորտի նախարարի խորհրդարանական քարտուղար Ջիմ Կարիջիանիսին՝ ուղեկցությամբ կանադահայ համայնքի ներկայացուցիչների:

«Մենք ծանոթ ենք Ձեր գործունեությանը, Ձեր մատուցած ծառայություններին Հայոց Ցեղասպանության ճանաչմանն ի խնդիր: ...Մենք խորապես գնահատում ենք այլ ազգերի պատկանող այն անձանց, որոնք մարդասիրության այդպիսի վեհ ոգի եւ գիտակցություն են դրսեւորել՝ զորակցելով մեր զավակներին Ցեղասպանության ճանաչման նվիրական գործում»,- ասաց Նորին Սրբությունը՝ ողջունելով Ջիմ Կարիջիանիսին:

Ի դեմս Ջ. Կարիջիանիսի՝ Ամենայն Հայոց Հայրապետն իր գնահատանքն ու գոհունակությունը հայտնեց նաեւ Կանադայի իշխանություններին ու ժողովրդին՝ Հայոց Ցեղասպանությունը ճանաչելու եւ դատապարտելու ազնիվ որոշման համար:

«Անձնապես ինձ համար այցելությունը Ծիծեռնակաբերդ իրապես ուխտագնացություն էր»,- իր հերթին նշեց Կանադայի խորհրդարանի ներկայացուցիչը:

Հանդիպման ընթացքում շեշտվեց Հայաստանում Կանադայի դեսպանատան հաստատման անհրաժեշտությունը, ինչն առավել կզորացնի երկու ժողովուրդների միջեւ հարաբերությունները եւ կխթանի համագործակցությունը պետությունների միջեւ:

27 ապրիլի

### Սիրիայի գործերի ժամանակավոր հավատարմատարին

Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում ընդունեց Հայաստանում Սիրիայի գործերի ժամանակավոր հավատարմատար, լիազոր նախարար դոկտոր Մուխլիս Ֆարաունին:

Ողջունելով դոկտ. Ֆարաունի այցը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին՝ Նորին Սրբությունը հաջողություններ եւ արդյունաշատ գործունեություն մաղթեց նրան իր նոր պաշտոնում: Վեհափառ Հայրապետն անդրադարձավ 2001թ. ապրիլին Սիրիա՝ Հալեպ եւ Դեր Զոր կատարած իր այցին, որի ընթացքում ուխտագնացություն կատարվեց նաեւ Սիրիայի անապատում գտնվող Հայոց Ցեղասպանության հուշարձան:

Սիրիայի գործերի ժամանակավոր հավատարմատարը, շնորհակալություն հայտնելով հանդիպման համար, նշեց, որ ուրախ է ծառայության կոչվել մի երկրում, որն ունի հարուստ մշակույթ եւ եղբայրական կապեր իր հայրենիքի հետ:

Հանդիպման ավարտին Ամենայն Հայոց Հայրապետը աղոթք վերառաքեց տարածաշրջանում խաղաղության եւ կայունության հաստատման համար:

## Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի հոգեւորականները տարբեր թեմերում մասնակցեցին Հայոց Ցեղասպանության 90-ամյա տարելիցի միջոցառումներին

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ ապրիլի 24-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբաններ եւ քահանա հայրեր մեկնեցին Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի, ինչպես նաեւ Ուկրաինայի հայոց թեմերի տարբեր քաղաքներ, ուր մասնակցեցին Հայոց Ցեղասպանության 90-ամյա տարելիցի առիթով կազմակերպված միջոցառումներին, կատարեցին Մեծ Եղեռնի բյուրավոր զոհերի հոգեհանգստյան հատուկ պաշտոններ, ընթերցեցին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի սրբատառ կոնդակը՝ նվիրված Հայոց Ցեղասպանության 90-ամյակին:

## Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի ներկայացուցիչները կմասնակցեն ԱՄՆ Արեւելյան եւ Արեւմտյան թեմերի ժողովներին

Ապրիլի 26-28-ը Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու ԱՄՆ Արեւելյան եւ Արեւմտյան թեմերում տեղի ունեցավ հոգեւորականների տարեկան համագումարները, իսկ ապրիլի 28-ից մինչեւ մայիսի 1-ը՝ թեմական-պատգամավորական ժողովները:

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձր տնօրինությամբ Մայր Աթոռ Սբ. Էջմիածնից ԱՄՆ Արեւելյան թեմի ժողովներին մասնակցեցին Տ. Հովակիմ աբղ. Մանուկյանը եւ Տ. Եսայի քհն. Արթենյանը, իսկ ԱՄՆ Արեւմտյան թեմի ժողովներին՝ Տ. Ադամ քհն. Մակարյանը եւ Տ. Անդրեաս քհն. Իսախանյանը:

## Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի միաբանները Երուսաղեմում մասնակցեցին զատկական արարողություններին

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ ապրիլի 27-ին Մայր Աթոռի միաբաններ՝ Արցախի թեմի առաջնորդ Տ. Պարգեւ արքեպիսկոպոս Մարտիրոսյանը, Տ. Սահակ աբեղա Ծաքարյանը Տ. Կյուրեղ աբեղա Վարդանյանը եւ Տ. Նորայր աբեղա Սիմոնյանը մեկնեցին Երուսաղեմի Հայոց Պատրիարքություն, ուր մշտապես հին տոմարով է (այս տարի՝ մայիսի 1-ին) նշվում Հիսուս Քրիստոսի հրաշափառ Հարության տոնը:

Հոգեւոր հայրերը Երուսաղեմում մասնակից եղան զատկական սրբազան արարողություններին եւ փոխանցեցին Ամենայն Հայոց Հայրապետի պատգամն ու օրհնությունը:

## Պրոֆ. Վահագն Դադրյանի դասախոսությունը Գեւորգյան հոգեւոր ճեմարանում

Ապրիլի 28-ին պրոֆ. Վահագն Դադրյանը հանդիպեց Գեւորգյան հոգեւոր ճեմարանի սաների հետ եւ բանախոսեց՝ «Հայոց Ցեղասպանության ուսումնասիրությունը եւ ուսումնասիրության արդյունքները» թեմայով:

Տիար Դադրյանին ճեմարանի հարկի ներքո ողջունեց ճեմարանի տեսուչ Տ. Եղիշե ավ. քհն. Սարգսյանը՝ անդրադառնալով նրա վաստակին եւ գիտական գործունեությանը:

Պրոֆ. Դադրյանը, իր հերթին ուրախություն հայտնելով մայրենի լեզվով դասախոսելու հնարավորության համար, ճեմարանականներին ներկայացրեց Հայոց Ցեղասպանության խնդիրների շուրջ 33 տարվա իր գիտական աշխատանքը, որը կատարել է, որպեսզի Մեծ Եղեռնի նահատակները երբեք մոռացության չմատնվեն:

Դասախոսության ընթացքում պրոֆ. Վահագն Դադրյանը մանրամասն անդրադարձավ Հայոց Ցեղասպանությանն առնչվող աղբյուրներին ու վկայություններին եւ դրանց ուսումնասիրության մեթոդաբանությանը:

## Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինն իրականացնում է «Գիր եւ պատգամ» ծրագիրը՝ նվիրված Հայոց գրերի գյուտի 1600-ամյակին

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը ՀՀ Կրթության եւ գիտության նախարարության գործակցությամբ իրագործում է «Գիր եւ պատգամ» ծրագիրը՝ նվիրված Հայոց գրերի գյուտի 1600-ամյա հոբելյանին:

Ըստ ծրագրի՝ ապրիլի 20-ից մինչեւ մայիսի 6-ը ուխտավորաբար հայոց հոգու օրրան Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին են այցելում քաղաքամայր Երեւանի եւ ՀՀ մարզերի հանրակրթական դպրոցների 9-10-րդ դասարանների աշակերտներ, որոնց հնարավորություն է ընձեռվում տեսնելու Վեհարանի թանգարանում պահվող ոսկեձույլ «Հայոց այբուբենը» եւ «Ծաղկյալ սուրբ խաչը», դիտելու «Հայոց այբուբեն» ու «Վարդանանք» գոբելենները, ինչպես նաեւ լինելու Մայր Աթոռի մյուս թանգարաններում:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում արդեն հյուրընկալվել են Արարատի, Արագածոտնի, Արմավիրի, Կոտայքի մարզերի դպրոցականները (յուրաքանչյուր մարզից 80-ական աշակերտ), ինչպես նաեւ Երեւանի մի քանի դպրոցների շուրջ 200 աշակերտներ:

Դպրոցականների ուխտագնացության առիթով, Ամենայն Հայոց Հայրապետի օրհնությամբ, Մայր Աթոռը նաեւ լույս է ընծայել «Գիր եւ պատգամ» խորագրով գրքույկ, որ բաժանվում է այցելու պատանիներին:

*ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍԲ. ԷՋՄԻԱԾՆԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*

# ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՄԵՆԱՄՌԱՅԼ ԷՋԸ

Հայ ժողովրդի հերոսական, ազատագրական պայքարի ու մաքառումների անմար հիշատակներով հարուստ հազարամյակների պատմության մեջ 1915 թ. գրվեց ամենամռայլ էջը. օսմանյան թուրքերն իրագործեցին արեւմտահայության Մեծ եղեռնը, որին զոհ գնաց 1,5 մլն. մարդ, իսկ հարյուր հազարավոր հայեր ցրվեցին աշխարհով մեկ՝ ծնունդ տալով հայկական Սփյուռքին: Բավական է անգամ թռուցիկ հայացք նետել Օսմանյան կայսրության պատմությանը՝ համոզվելու համար, որ այն նվաճված ժողովուրդների անլուր շահագործման ու հալածանքների, ջարդերի ու զանգվածային կոտորածների, իսկ XIX դարի 90-ական թվականներից սկսած՝ նաեւ ցեղասպանությունների պատմություն է, որին զոհ են գնացել միլիոնավոր մարդիկ:

Օսմանյան թուրքերը Արեւմտյան Հայաստանի մաս կազմող Փոքր Հայքում իրենց տիրապետությունը հաստատեցին դեռեւս XV դարում, իսկ XVI դարի 50-ական թվականներին, պարսկա-թուրքական արյունահեղ պատերազմների արդյունքում, տիրեցին ամբողջ Արեւմտյան Հայաստանին՝ ավերելով երկիրը, ոչնչացնելով ու գերեվարելով բնակչության նշանակալից մասը: Հայ եւ նվաճված մյուս ժողովուրդների համար սկսվեցին մղձավանջային տարիներ: Ռազմավարական նշանակություն ունեցող վայրերում ամենադաժան եղանակներով փորձում էին մահմեդականացնել քրիստոնյա հպատակներին, որոնց նշանակալից զանգվածներ ստիպված բռնում էին արտագաղթի ճանապարհը: Թուրքական աշխարհագրերն արձանագրում են, թե ինչպես թուրքական տիրապետության դաժան լծի հետեւանքով աստիճանաբար նվազում էր հայերի ու մյուս քրիստոնյա ժողովուրդների թիվը, եւ փոփոխվում քրիստոնյաների ու մահմեդականների տոկոսային հարաբերակցությունը: Չնայած այդ, իիրավի, դժոխային պայմաններին, Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքարանի 1876 թ. տվյալներով, հայերն Օսմանյան կայսրությունում կազմում էին շուրջ 3 մլն., որից 400 հազարը կենտրոնացած էր Կոստանդնուպոլսում եւ Բալկաններում, 600 հազարը՝ փոքրասիական վիլայեթներում եւ Կիլիկիայում, 670 հազարը՝ Փոքր Հայքում եւ Կեսարիայի շրջանում եւ 1.330 հազարը՝ Մեծ Հայքի Արեւմտյան Հայաստանի մաս կազմող հատվածում:

1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմում ռուսական զենքի տարած փայլուն հաղթանակներից հետո Սան-Ստեֆանոյի եւ Բեռլինի վեհաժողովի պայմանագրերով Հայկական հարցը միջազգայնացվեց: Օսմանյան կայսրությունը Սան-Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ հոդվածով պարտավորվում էր հայաբնակ գավառներում անցկացնել բարենորոգումներ՝ ապահովելու համար հայերի անվտանգությունը քրդերից եւ չերքեզներից, որի կատարման երաշխավորներն էին դառնում Արեւմտյան Հայաստանի զգալի մասը ռազմակալած ռուսական զորքերը: Սակայն Սան-Ստեֆանոյի պայմանագիրը Բեռլինի վեհաժողովում վերանայվեց: Նոր պայմանագրի 61-րդ հոդվածով օսմանյան Բարձր դուռը պարտավորվում էր իրականացնել բարեփոխումներ ու բարենորոգումներ հայերի անվտանգությունը չերքեզներից ու քրդերից ապահովելու համար, իսկ դրանց կատարման հսկողությունը տրվում էր եվրոպական 6 մեծ տերություններին: Բարենորոգումներ այդպես էլ չիրականացվեցին: Եվրոպական տերությունները, հետապնդելով իրենց շահերը եւ առավել կամ պակաս զիջումներ կորզելով Օսմանյան կայսրությունից, մոռացության տվեցին իրենց վերահսկողության լիազորությունները, իսկ արեւմտահայությունը հայտնվեց ծանր կացության մեջ: Թուրքերի եւ քրդերի կողմից հնարավոր ջարդերի սարսափն առաջ բերեց հայերի զանգվածային արտագաղթ, որն արդեն սկսվել էր պատերազմական գործողությունների ժամանակ եւ հարվածում էր հայերի էթնիկ ներուժին: Ցարիզմը, պատճառաբանելով հողասակավությունը Երեւանի նահանգում, արտագաղթողների նշանակալից մասին բնակեցրեց Հյուսիսային Կովկասում՝ այդ նույն ժամանակ ռուս վերաբնակիչներ տեղավորելով Արեւելյան Հայաստանում:



Խիստ անհանգստացած անգամ Բեռլինի վեհաժողովի պայմանագրի անատամ 61-րդ հոդվածից եւ դրան ուղեկցող գործընթացից, որոնք Բարձր դռան կարծիքով՝ կարող էին հանգեցնել Հայաստանի անկախության վերականգնմանը, թուրքական իշխանությունները որոշեցին իրականացնել հայերի ցեղասպանությունը՝ վերջինս բարձրացնելով պետական քաղաքականության աստիճանի: Հայերը մեծ պատնեշ էին Օսմանյան կայսրության համար, որը որդեգրելով պանթուրքիզմի վարդապետությունը՝ ձգտում էր ստեղծել Մեծ Թուրան՝ նրա մեջ ներառելով թյուրքական բոլոր ժողովուրդներին: Ըստ Բարձր դռան ծրագրերի՝ հայերը կա՛մ պետք է թուրքանային, կա՛մ ոչնչանային: Օսմանյան արքունիքը Հայկական հարցի «լուծումը» տեսնում էր հայերի ոչնչացման մեջ. **չկան հայեր, հետեւաբար չկա եւ Հայկական հարց**:

Խոստացված բարենորոգումների փոխարեն օսմանյան իշխանությունները լոկ ուժեղացրին հայերի հալածանքներն ու ճնշումը, պաշտոնական գրագրության մեջ արգելեցին անգամ **Հայաստան** բառի օգտագործումը: Զանգվածաբար բռնագրավվում էին հայերին պատկանող հողերը՝ ստիպելով հայերին արտագաղթել, իսկ նրանց հողերի վրա բնակեցնում էին քրդերի, չերքեզների եւ Բալկաններից գաղթած մահմեդականների: Ուժգնացող հայ ազգային-ազատագրական շարժման առաջն առնելու համար սուլթան Համիդ Բ-ի կողմից ստեղծվեցին քրդական համիդիե զորամասերը: Հայերի բողոքները թե՛ Բարձր դռանը եւ թե՛ եվրոպական տերություններին, որ օսմանյան արքունիքը չի կատարում ստանձնած բարենորոգումները, մնում էին անպատասխան կամ էլ նոր հալածանքների առիթ էին դառնում:

Հայ ժողովուրդը՝ ի դեմս իր գործիչների, հասկացավ, որ միայն զենքի միջոցով կարող է նվաճել մարդկային տարրական իրավունքները եւ ոչ թե խնդրագրերով կամ աղերսագրերով: Ծնունդ առան ազատագրական առաջին խմբակներն ու կազմակերպությունները, իսկ XIX դարի 80-90-ական թթ. ձեւավորվեցին հայ քաղաքական կուսակցությունները՝ Արմենական, Հնչակյան եւ Դաշնակցական կուսակցությունները, որով հայ ազատագրական շարժումը թեւակոխեց նոր շրջան:

Հասկանալով, որ դեպքերի բնականոն զարգացումը հանգեցնելու է Հայաստանի անկախության վերականգնման, մեծ վեզիր Քյամիլ փաշան դեռեւս 1878 թ. առաջարկում էր Ասիական Տաճկաստանում (իմա՛ Արեւմտյան Հայաստան) վերացնել հայերին: Հետագա իրադարձությունները ցույց տվեցին, որ թուրքական իշխանությունները լոկ հայության ոչնչացումն իրականացնելու պատեհ առիթի էին սպասում:

Իսկ մինչ այդ անցկացվեցին վարչական այնպիսի վերաձեւումներ, որ նոր կազմավորված վիլայեթներում հայերը մեծամասնություն չկազմեն, իսկ Բալկաններից գաղթած մահմեդականներին, որոնց թիվը 1878-1908 թթ. կազմեց ավելի քան 850 հազար մարդ, նշանակալից մասով բնակեցրին Արեւմտյան Հայաստանի տարածքում: Արեւմտյան Հայաստանի բնակչության ընդհանուր հաշվեկշռում հայերի գերակշիռ դերը վերացնելու նպատակով հատկապես մեծ թվով մահմեդականներ բերվեցին Արեւմտյան Հայաստան 1912-1913 թթ. Բալկանյան պատերազմներից հետո: Օսմանյան կայսրության հայությունը, որ բնականոն զարգացման պայմաններում XIX դարի 80-ական թթ. կազմելու էր առնվազն 3,5-3,6 մլն., թուրքական իշխանությունների վայրագ քաղաքականության ու դրա հետեւանքով ահռելի չափեր ընդունած արտագաղթի պատճառով աստիճանաբար նվազում էր:

*Շարունակությունը՝ էջ 7*

---

## ԵՂԵՌՆ-90

**Վլադիմիր Սոլովյով**

# ԵՐԵՔ ԶՐՈՒՅՑ

## Զրույց առաջին

**(հատված)**

*Սկիզբը՝ թիվ 7*

**ՏԻԿԻՆ** Իսկ ինչո՞վ ավարտվեց:

**ԳԵՆԵՐԱԼ** - Ավարտվեց լավագույնս, առանց վրիպումի: Կազակները մարտի բռնվեցին եւ նույն պահին էլ սկսեցին աղաղակով նահանջել: Սատանայի ցեղն էլ ՝ նրանց հետեւից. խիստ բորբոքվել էին: Անգամ կրակելը դադարեցրին եւ ողջ ոհմակով արշավեցին ուղիղ մեզ վրա: Կազակներն էլ, երկու հարյուր սաժենի չափ մոտենալով յուրայիններին, կորեկի պես սփռվեցին՝ ով որտեղ պատահի: Զգում էի, որ արդեն ժամն էր Աստծո կամքի:

- Հարյուրյա՛կ, ետ քաշվի՛ր:

Թնդանոթները քողարկող զինվորների շարքն աջ ու ձախ բացվեց. մենք պատրաստ էինք: Տեր Աստված, օրհնի՛ր: Հրամայեցի մարտկոցից կրակ բացել: Եվ Աստված օրհնեց իմ բոլոր վեց հարվածները: Նման հրեշային վայնասուն ես կյանքում չէի լսել: Չհասցրին ուշքի գալ, երբ երկրորդ համազարկը տվեցինք: Տեսնեմ՝ ողջ հորդան հետ ընկրկեց, ետեւից՝ երրորդը տվեցինք: Այնպիսի իրարանցում ստեղծվեց, ոնց որ մի քանի վառված լուցկիներ մրջնանոցը գցած լինեիր: Ճողոպրում էին, իրար ոտնատակ տալիս: Մենք էլ կազակների ու դրագունների հետ ձախ թեւից խփեցինք եւ սկսեցինք նրանց սիլոսի պես փրթել: Քչերին հաջողվեց ճողոպրել, որոնք եւ մանրագնդակից խուսափելով՝ թրի տակ ընկան: Տեսնեմ՝ որոշներն էլ հրացանները շպրտում են, ձիերից վայր ցատկում՝ կամենալով հանձնվել: Այստեղ արդեն ոչ մի հրաման չտվեցի. զինվորներն իրենք էլ հասկանում էին, որ գերիների կարիք չունեինք, եւ բոլորին կոտորեցին: Մինչդեռ, եթե այդ անուղեղ սատանաներն առաջին երկու դիմահար համազարկից հետո, որոնք արձակվել էին 20-30 սաժեն հեռավորության վրա, ետ չփախչեին, այլ հարձակվեին թնդանոթների վրա, ապա հաստատ մեր բանը բուրդ կլիներ. երրորդ համազարկը չէինք հասցնի արձակել: Դե, Աստված էր մեզ հետ: Գործն ավարտվեց: Իսկ իմ հոգում Քրիստոսի լուսավոր Հարությունն էր: Հավաքեցինք մեր սպանվածներին. երեսունյոթ մարդ հոգին հանձնեց Աստծուն: Շարեցինք մի հարթ տեղ ու աչքերը փակեցինք: Երրորդ հարյուրյակում մի փորձառու ենթասպա ունեի՝ Օդարչենկոն: Նա մեծ տիրացու էր եւ զարմանալի ընդունակությունների տեր մարդ: Անգլիայում կարող էր լինել առաջին նախարար: Այժմ հայտնվել է Սիբիրում՝ իշխանություններին դիմադրություն ցույց տալու համար, երբ նրանք փակել են հերձվածողական մի վանք ու քանդել սրանց կողմից հարգված ինչ-որ վանականի գերեզման: «Դե,- ասում եմ,- Օդարչենկո, արշավում ենք գտնվում, «ալելույաներից» ինչպե՞ս գլուխ հանենք, եղի՛ր մեր քահանան, կատարի՛ր մեր հանգուցյալների հուղարկավորությունը»: Իսկ նրա համար, անշուշտ, դա մեծ հաճույք էր. «Ուրախ եմ ծառայել, Ձե՛րդ գերազանցություն»,- ասաց եւ պայծառացավ: Երգիչներ էլ գտնվեցին: Տեղը-տեղին հուղարկավորեցինք: Միայն հնարավոր չեղավ մեղքերի թողություն տալ. դե, այստեղ դրա կարիքը չկար էլ. Քրիստոսի խոսքը նախապես է արձակել նրանց, ովքեր իրենց հոգին տալիս են հանուն ընկերոջը: Ահա թե ինչպես է այժմ հիշողությանս մեջ մնացել այդ հուղարկավորությունը: Ամբողջ օրն ամպամած էր, աշնանային: Վերջալույսից առաջ



ամպերը ցրվեցին. ներքեւում կիրճն էր սեւին տալիս, իսկ երկնքում գույնզգույն ամպեր էին. ասես Աստծո գնդերն էին հավաքվել: Հոգումս լուսավոր տոն էր: Ինչ-որ լռություն եւ անհասկանալի թեթեւություն էր պատել ինձ. ասես սրբված էի կենցաղային աղտերից ու ազատված երկրային բոլոր հոգսերից. ուղղակի դրախտային վիճակ. զգում եմ միայն Աստծուն եւ ուրիշ ոչինչ: Իսկ, երբ Օդարչենկոն սկսեց անուն առ անուն հիշատակել զոհվածներին, ովքեր հանուն հավատքի, թագավորի եւ հայրենիքի իրենց կյանքը դրեցին ռազմի դաշտում, զգացի, որ դա պաշտոնական ճառախոսություն չէր, ոչ էլ ինչ-որ ձեւական արարողություն, ինչպես դուք եք ասում, այլ իրոք վասն արդարության գոյություն ունի քրիստոսասեր զորականություն, եւ այդ պատերազմն ինչպես եղել է, այնպես էլ կա եւ մինչեւ աշխարհի վերջը կմնա մեծ, ազնիվ ու սուրբ գործ...

**ԻՇԽԱՆ** (փոքր-ինչ լռությունից հետո) - Իսկ երբ դուք այդ լուսավոր տրամադրությամբ հողին էիք հանձնում ձերոնց, մի՞թե բոլորովին չհիշեցիք ախոյաններին, որոնց դուք սպանել էիք այդքան մեծ բազմությամբ:

**ԳԵՆԵՐԱԼ** - Դե, փառք Աստծո, որ մենք հասցրեցինք առաջ շարժվել, նախքան այդ լեշերն իրենց մասին կհիշեցնեին:

**ՏԻԿԻՆ** - Ահա եւ փչացրեցիք ողջ տպավորությունը: Մի՞թե կարելի է այդպես:

**ԳԵՆԵՐԱԼ** (դիմելով իշխանին) - Իսկ դուք ի՞նչ եք ինձանից ուզում: Որ ես այդ շնագայլերի համար քրիստոնեական հուղարկավորություն կատարեի՞, որոնք ոչ քրիստոնյա էին, ոչ էլ՝ մուսուլման, այլ սատանան գիտի, թե ինչ: Չէ՞ որ, եթե ես մի պահ խելքս թռցնեի եւ կարգադրեի դրանց հուղարկավորել կազակների հետ միասին, դուք, հավանաբար, կկշտամբեիք ինձ կրոնական բռնության մեջ: Ինչպե՞ս չէ: Այդ «լավիկ» դժբախտները կյանքի օրոք սատանային էին երկրպագում, կրակ էին պաշտում, եւ հանկարծ՝ մահից հետո ենթարկել նրանց սնահավատ ու կոպիտ կեղծ քրիստոնեական արարողությա՞ն: Ոչ, ես ուրիշ խնդիր ունեի: Կանչեցի հարյուրապետներին եւ յասավուլներին, հրամայեցի հայտարարել, որ ոչ ոք չհամարձակվի երեք սաժենից ավել մոտենալ այդ սատանայական լեշերին, քանզի նկատել էի, որ իմ կազակների ձեռքերը վաղուց քոր էին գալիս՝ տնտղելու դրանց գրպանները՝ ըստ սովորության: Թե չէ, ո՞վ գիտի դրանց, մեկ էլ տեսար՝ ինչ-որ ժանտախտ տարածեցին: Գրողի ծոցը կորչեին դրանք:

**ԻՇԽԱՆ** - Ես ձեզ ճի՞շտ հասկացա: Դուք վախենում էիք, որ կազակները կսկսեին բաշիբոզուկների դիակները կողոպտել եւ նրանցից որեւէ վարակ բերեին ջոկատ, այո՞...

**ԳԵՆԵՐԱԼ** - Հենց դրանից էլ վախենում էի: Կարծում եմ՝ պարզ է:

*Շարունակությունը՝ էջ 9*

## Կից Սենյակում

# ՎՇՏՈՎ ԶԱՐԴԱՐՎԵԼՈՒ ՄԵԹՈԴՆ ԻՆՁ ՀԱՄԱՐ ԱՆԸՆԴՈՒՆԵԼԻ Է...

### Մեր հյուրն է արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր, գիտության վաստակավոր գործիչ Հենրիկ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԸ

**- Այս տարի լրացավ Հայոց Մեծ Եղեռնի 90-րդ տարելիցը: 1915-ին իրականացված նախճիրը մեր ժողովրդի, նաեւ համաշխարհային պատմության մեջ մտավ իբրեւ Մեծ եղեռն, XX դարասկզբի I զանգվածային ցեղասպանություն: Ցեղասպանությունը մեծագույն հանցագործություն է, որն ուղղված է համայն մարդկության դեմ: Այսօր արդեն շուրջ 15 պետություն ճանաչել եւ դատապարտել է այն, դրան ի պատասխան՝ Թուրքիան ուժեղացնում է հակահայկական հիստերիան՝ համառորեն մերժելով ցեղասպանության իրողությունը: Մինչդեռ Հայաստան-Թուրքիա հարաբերությունների բարելավումը հնարավոր է միայն այն դեպքում, երբ Թուրքիան ընդունի հայերի դեմ իրականացված ցեղասպանությունը: Ի՞նչ լուծումներ եք տեսնում այս հարցի կարգավորման առնչությամբ:**

- Ամեն մարդ պետք է դատի, վճռի, խոսի խնդրի այն կողմի մասին, ինչը վերաբերում է իրեն: Որպես մշակույթի եւ գիտության մարդ՝ ես կարծում եմ, որ ցեղասպանության ճանաչման խնդիրը քաղաքական հարց է, որը պահանջում է հանգիստ տրամաբանություն, տրամաբանական հետեւողականություն եւ քաղաքական կամք, այսինքն՝ ողջամտություն եւ սառնասրտություն: Ուստի, որպեսզի այս գործը հասնի իր նպատակին, պետք է տարվի սառնասրտորեն, գիտակցաբար, տրամաբանությամբ, ողջամտությամբ:

Ինձ մտահոգում է այն, որ ցեղասպանության հարցը դարձել է եւ դարձնում են ազգային գաղափարաբանության ելակետ եւ հիմք: Դա ես համարում եմ արմատապես սխալ: Իսկ եթե դա եղած չլիներ, մեր ազգային գաղափարաբանությունն ի՞նչ հիմքի վրա պետք է դրվեր: Երեւի չէինք ունենա ազգային գաղափարաբանություն: Եթե այս խնդիրը հանվի, կտեսնենք, որ գաղափարապես աղքատ ենք: Սա մտահոգող է: Ոչ մի հարցի շուրջ մեր հասարակությունը, մտավորականությունը այնքան չեն ներշնչվում եւ ոգեւորվում, որքան Եղեռնի հարցի շուրջ: Ես դատում եմ այս մասին արվեստագետի դիրքից: Այն, ինչը դժբախտություն է, աղետ է, վիշտ է, իմ մեղավոր կարծիքով, չի կարող լինել գեղարվեստական ներշնչման եւ գեղարվեստական երեւակայության աղբյուր: Վշտով զարդարվելու մեթոդն ինձ համար անընդունելի է: Մարդիկ այս հիմքի վրա ուզում են ստեղծել արվեստ՝ պոեմներ, բանաստեղծություններ, պիեսներ, թատրոն, երաժշտություն: Այն, ինչը մեզ համար քաղաքական եւ դիվանագիտական հարց է, չպետք է զարդարվի գեղարվեստական հորինվածքներով: Ես չեմ ընդունում այս թեմայով գրված պիեսներն ու ներկայացումները: Ասում են. «Սա ողբ չէ, սա մեզ տալիս է ապրելու հույս»: Սակայն մենք հույսը կտրած ազգ չենք ամենեւին: Ես վատատես չեմ մեր ապագայի հանդեպ: Չեմ կարող ասել, որ մեծ ապագա ունենք, բայց եւ համաձայն չեմ նրանց հետ, ովքեր ասում են, թե մենք ապագա չունենք, եւ թե Հայաստանը կործանվում է: Ուղղակի պետք չէ կործանել:

Գիտենք, որ Եղեռնի թանգարանի խնդիրն է ցույց տալ փաստական նյութ, մինչդեռ այսօր այդ փաստական նյութերի կողքին կախված են Ժանսեմի նկարները, որոնք գեղարվեստական երեւակայության արդյունք են: Դա մեր թշնամու օգտին է: Չի կարելի երեւակայությամբ ծաղկեցնել, զարգացնել ողբերգությունը:

Չեմ ընդունում նաեւ այն, որ Եղեռնի զոհերի հուշարձան են գնում մարդիկ՝ երեխաներին գրկած: Երեխայի գիտակցությունը դեռ նոր է ձեւավորվում, իսկ մենք ուզում ենք, որ այդ գիտակցության հիմքում լինի ատելությո՞ւնը:

Այս օրերին հեռուստաէկրանին տեսնում ենք փաստագրական պատկերներ. ամեն անգամ դրանք կեղեքում են իմ հոգին եւ ավելի մեծացնում իմ ատելությունը, բարդացնում իմ կյանքը: Ես այդ մասին գիտեմ, բոլորս գիտենք: Ինձ կեղեքելով՝ փորձում են օգնել ինձ ապրել:



**- Պրն. Հովհաննիսյան, ի՞նչ եք կարծում, հայ ժողովուրդը կկարողանա՞ ներել Թուրքիային, եթե վերջինս ընդունի Ցեղասպանությունը, գուցե մեր ատելությունն այդժամ փոխվի ներողամտության:**

- Մենք ատում ենք մեր դարավոր թշնամուն, ուզում ենք, որ այս ատելությունը չդրսեւորվի, ուզում ենք չապրել այդ ատելությամբ, սակայն մեր մեջ անթեղված այդ ատելության կրողներն ենք: Նախնիներս (պապիս ընտանիքը) Կարսից են գաղթել, ճանապարհին ցրվել, զոհ դարձել: Ես հայ քահանայի թոռ եմ, հայոց լեզվի ուսուցչի որդի: Որպես հայ՝ ես երեւի թե երբեք չեմ կարողանա ներել: Մենք կներենք առերես, քաղաքականապես, բայց մեր բոլորի հոգում, ցավոք, կմնա անթեղված ատելությունը: Չխաբենք մեզ:

**- Այսօր պայքարում ենք հանուն մեծ արդարության հաստատման, պայքարում ենք 2 մլն. անմեղ նահատակների հիշատակի եւ մեր պատմական հայրենիքի բռնազավթված տարածքները ետ բերելու համար: Դուք լավատե՞ս եք այն առումով, որ մեր պատմական հայրենիքը վերստին կբնակեցվի հայերով:**

- Չեմ կարծում: Մեր դարավոր թշնամին շատ ավելի մեծ է քանակով, եւ մենք երբեք էլ նրան չենք վտարելու մեր պատմական հայրենիքից, մենք նրան չենք ոչնչացնելու: Ես նայում եմ 29 000 կմ$^2$ տարածք ունեցող Հայաստանին: Մտածենք այս երկիրը պահելու, ծաղկեցնելու մասին: Այսօր ոչնչացվում են անտառներ, եւ ոչնչացնողը հայն է: Րաֆֆին ասում էր. «Թուրքը պտուղն ուտում է, ծառը՝ ոչնչացնում»: Նայենք մեզ, որ գործում ենք նույնը: Մտածենք մեր անկախ հանրապետության մասին: Սա քիչ չէ, որ տրված է մեզ: Անկախությունը շատ մեծ բան է: Սա՛ պետք է պահել: Մեր երկիրը լցված է պառակտիչներով՝ կուսակցություններ, հայրենակցական միություններ, աղանդներ: Դրսից մեզ քայքայում, պառակտում են: Մտածենք մեր ներքին պառակտումը վերացնելու, ներքուստ միասնականանալու մասին: Մտածենք մեր հոգեւոր հայրենիքի գլխավոր հենարանը, մեր ազգային կեցության տունը, մեր լեզուն չայլանդակելու մասին: Մեր ազգային կեցության իմաստը, մեր քաղաքական, հոգեւոր ապագան այստեղ է: Այնքան խնդիրներ ունենք, որ մեզ համար սահմանից այն կողմ նայելը շա՛տ վաղ է:

**- Պրն. Հովհաննիսյան, ըստ Ձեզ, ի՞նչ կտա մեզ Ցեղասպանության ճանաչումը:**

- Ցեղասպանության ճանաչումը մեզ կտա որոշ բարոյական բավարարվածություն, մեր թշնամուն կտեսնենք, այսպես ասած, մեղավորի վիճակում, բայց իրականում շոշափելի ոչինչ չի տա: Դա կունենա սոսկ բարոյական նշանակություն:

**- Կարո՞ղ ենք դա բարոյական հաղթանակ կոչել:**

- Այո՛, դա կլինի բարոյական հաղթանակ, սակայն բարոյական հաղթանակներն անհույս մարդու մխիթարությունն են: Դա չպետք է ոգեւորվելու առիթ լինի: Չխաբենք ինքներս մեզ:

Իսկ շատ խոսելը «կուրացնէ զմիտս եւ խափանէ հանճարեղութիւն, չորացնէ զուղեղն եւ անհարկի անէ զմարդն»: Սա գրված է մեր ձեռագրերից մեկում: Ուստի առաջնորդվենք այս խրատով եւ բավարարվենք այսքանով:

**- Շնորհակալությո՛ւն:**

*Զրուցընկալեց*
*Անժելա ԽԱՉԱՏՐՅԱՆԸ*

# ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՄԵՆԱՄՌԱՅԼ ԷՋԸ



**1965 թ. 24 ապրիլ**

*Սկիզբը՝ էջ 6*

Իր հերթին վիճակագրական խեղաթյուրումների քաղաքականություն էր իրականացնում Բարձր դուռը, որը 1880 թ. հուլիսի 5-ին եվրոպական տերությունների դեսպաններին հայերի թիվը ներկայացնում էր ընդամենը 700 հազար: Չրկվելով եվրոպական տիրույթներից՝ թուրքական իշխանություններն աշխատում էին հայերից մաքրված Արեւմտյան Հայաստանը վերածել թուրքական հայրենիքի:

XIX դարի 90-ական թթ. կեսերից Բարձր դուռը գործնականում ձեռնամուխ եղավ արեւմտահայության զանգվածային բնաջնջմանը: 1894-1896 թթ. այն զինվորական ու քաղաքացիական իշխանությունների, քրդական համիդիե զորամասերի եւ մահմեդական խուժանի ձեռքով հայկական կոտորածներ իրականացրեց կայսրության տարածքի մեծ մասում: Չնայած ինքնապաշտպանության առավել կամ պակաս հաջող փորձերին՝ ջարդերին ու կոտորածներին զոհ գնաց ավելի քան 300 հազար մարդ, բռնի մահմեդականացվեց 100 հազարը, առեւանգվեցին տասնյակ հազարավոր աղջիկներ ու կանայք, կողոպտվեցին 3000-ից ավելի հայկական բնակավայրեր, եւ մոտ 300 հազար հայեր արտագաղթեցին Ռուսաստան եւ նրա մաս կազմող Արեւելյան Հայաստան ու այլ երկրներ:

Ցեղասպանության պետական քաղաքականության աստիճանի բարձրացած լինելն ամբողջությամբ բացահայտվեց երիտթուրքերի կառավարման տարիներին: Իշխանության գլուխ գալով 1908 թ.՝ երիտթուրքերն արդեն 1909 թ. կազմակերպեցին Ադանայի կոտորածները, որոնց զոհ գնացին 30 հազարի չափ կիլիկեհայեր: Երիտթուրքերը, որ 1910-1911 թթ. իրենց գաղափարախոսությունը դարձրին պանթուրքիզմը, իրենց ամբողջ գործունեությամբ ապացուցեցին, որ սուլթան Համիդ Բ-ի հոգեհարազատ ժառանգներն են: 1910 թ. հոկտեմբեր-նոյեմբերին Սալոնիկում կայացած համագումարի որոշումները ճակատագրական եղան ոչ թուրք ժողովուրդների համար: Հատկապես մեծ կարեւորություն տրվեց հայերի բնաջնջմանը, որով ոչ միայն Արեւմտյան Հայաստանը կվերածվեր թուրքերով բնակեցված երկրի, այլեւ հայերի հարստությունները կանցնեին թուրքերին, եւ կվերացվեր Մեծ Թուրանի ստեղծման ճանապարհին ընկած ամենամեծ խոչընդոտը: Օսմանյան իշխանությունները, կայացնելով նման որոշում, լոկ պատեհ ժամանակների էին սպասում՝ այն կենսագործելու համար: Նման պատեհություն ընձեռեց Առաջին աշխարհամարտը (1914-1918):

Օսմանյան կայսրությունը պատերազմի մեջ մտավ Թուրքական մեծ կայսրություն՝ Մեծ Թուրան ստեղծելու անիրականանալի ու սին պլաններով, կայսրություն, որի սահմանները ձգվելու էին Բալկաններից մինչեւ Չինաստան՝ ներառելով Օսմանյան կայսրության երբեմնի ընդարձակ տարածքները, Ռուսական կայսրության, Պարսկաստանի եւ Չինաստանի իշխանության ներքո գտնվող թյուրքական ժողովուրդներին: «Հայերը միակ արգելքն են մեր (հիմա՛ թուրքերի) քաղաքականության հաջողության, քաղաքականություն, որ պետք է բանա Հնդկաստան տանող ճանապարհը: Անհրաժեշտ է ոչնչացնել հայերին եւ նրանց դիակների վրայով քայլելով՝ հասնել մեր նպատակին...»,- ասվում էր «Միություն եւ առաջադիմություն» կամ երիտթուրքերի կուսակցության Կենտկոմի՝ իր տեղական կազմակերպություններին առաքած շրջաբերականում: Երիտթուրքերը պատերազմին իրենց մասնակցությունն արդարացնում էին ազգային գաղափարով, որի նպատակն էր մոսկովյան թշնամու, այսինքն՝ Ռուսական կայսրության ոչնչացումը, ինչը հնարավորություն կտար միավորելու թյուրքական ռասայի բոլոր ճյուղավորումները: Երիտթուրքերի ջարդարարական պլանների մեջ էր մտնում ավելի ուշ քրդերի եւ արաբների վերացումը:

Արեւմտահայերի զանգվածային կոտորածներն ու տարագրությունն իրականացվեց մի հանձնախմբի կողմից, որի անդամներն էին դոկտոր Նազըմը, դոկտոր Բեհաէդդին Շաքիրը եւ «Լուսավորության» նախարար Միդհատ Շյուքրին: Այս մարմինը կամ երեքի կոմիտեն անկախ էր իր գործողությունների մեջ, ուներ իր պաշտոնեությունը եւ իրավասու էր բանտերից հավաքագրել քրեական հանցագործներին՝ նրանցից չեթեական հրոսակախմբեր կազմելու եւ ջարդերը կազմակերպելու համար: Հանձնախմբի գործունեությունը վերահսկում էր ներքին գործերի նախարար Թալեաթ փաշան:

1915 թ. ապրիլի 15-ին արեւմտահայության ոչնչացման մասին որոշում կայացվեց եւ որպես հրաման՝ Թալեաթի, Էնվերի եւ Նազըմի ստորագրությամբ ուղարկվեց տեղական իշխանություններին: Համաձայն այդ գաղտնի հրամանի՝ «Միություն եւ առաջադիմություն» կուսակցության կոմիտեն, կանխելու համար որեւէ մի տեղ եւ որեւէ մի ձեւով Հայկական հարցի բարձրացումը, օգտվելով համաշխարհային պատերազմի ընձեռած պատեհությունից, որոշել է վերջնականապես վերջ դնել այդ հարցին՝ բնաջնջելով այդ խորթ տարրը, այսինքն՝ հայերին՝ քշելով նրան Արաբիայի անապատները: Ավելին, ովքեր կփորձեին պաշտպանել կամ թաքցնել հայերին, ճանաչվում էին հայրենիքի ու կրոնի թշնամի եւ ենթակա էին խիստ պատիժների:

Հարկ է նշել, որ հայերի ցեղասպանությունը սկսվեց արդեն մինչեւ 1915 թ. ապրիլի 15-ի հրամանի իջեցումը տեղական կառավարման մարմիններին: Հրեշավոր ծրագիրն անխափան իրականացնելու համար օսմանյան բանակ զորակոչվեց ժողովրդի մարտունակ մասը, որն անպայման հակահարված կտար թուրք մարդակերներին: Ամեն տեսակի պաշտպանություն ու դիմադրություն բացառելու համար՝ երիտթուրքերը նախապատրաստեցին նրանց ոչնչացումը:

*Շարունակությունը՝ էջ 9*





Սկիզբը՝ էջ 7

# ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՄԵՆԱՄՌԱՅԼ ԷՋԸ

Օրենքով զորակոչի ենթակա էին 20-45 տարեկան առողջ տղամարդիկ, սակայն զորահավաքի ենթարկվեցին փաստորեն զենք կրելու ընդունակ բոլոր տղամարդիկ: Թուրքական իշխանությունները, իբրեւ թե զինվորական ծառայությունից ազատելու համար՝ որպես զինվորական հարկ, զինակոչիկներից խաբեությամբ շորթում էին միջին հաշվով 50 թուրքական ոսկի, ապա բռնությամբ բոլորին զորակոչում էին, իսկ խուսափողներին՝ գնդակահարում: Դիմադրությունն ընդհանրապես կանխելու նպատակով՝ զորահավաքն ուղեկցվում էր հայերի եւ մյուս քրիստոնյաների զենքի բռնագրավմամբ: Բանն այնտեղ հասավ, որ հալածանքներից խուսափելու համար հայերը մահմեդականներից բարձր գներով զենք էին գնում, որ հանձնեն թուրքական իշխանություններին: Հայ զինվորականությունը մեծ մասամբ ուղարկվեց Միջագետքի ու սիրիական ճակատներ, որտեղ նրանց աշխատեցնում էին ճանապարհների կառուցման վրա կամ տեղավորում պաշտպանական ջոկատներում: Սարիղամիշի գործողությունում սոսկալի պարտություն կրելուց հետո երիտթուրքերը կազմակերպեցին հայ զինվորականության ոչնչացումը: Մինչեւ 1915 թ. գարուն նրանք զինաթափվեցին եւ խիստ գաղտնիության պայմաններում ոչնչացվեցին խումբ առ խումբ:

Խորապես գիտակցելով մտավորականության դերը հայերի հնարավոր դիմադրությունը կազմակերպելու գործում՝ երիտթուրքերի հրեշավոր ծրագրի գործադրման երկրորդ գործողությունը եղավ հայ մտավորականների համատարած ձերբակալությունն ու աքսորը եւ ոչնչացումը: 1915 թ. ապրիլի 24-ին Կոստանդնուպոլսում ձերբակալվեցին 235 անվանի գործիչներ ու մտավորականներ: Ապրիլի 29-ին ձերբակալվածների թիվը հասավ 800-ի, որոնք քշվեցին Անատոլիայի խորքերը եւ անլուր տանջանքներից հետո գազանաբար ոչնչացվեցին Այաշում, Չանղըրիում եւ մի շարք այլ վայրերում: Զոհվածների մեջ էին տաղանդավոր գրող-հրապարակախոս Ռուբեն Զարդարյանը, գիտնական դոկտոր Նազարեթ Տաղավարյանը, կուսակցական գործիչներ Է. Ակնունին, Գ. Խաժակը, Հ. Ճանկուլյանը, մեծ քնարերգու Սիամանթոն, վիպասան եւ հրապարակախոս Սմբատ Բյուրատը, տաղանդավոր գրող Գրիգոր Զոհրապը, դերասան Ենովք Շահենը, տաղանդավոր բանաստեղծներ Դանիել Վարուժանը եւ Ռուբեն Սեւակը, գրող Երուխանը եւ շատ ուրիշներ: Այդ հրեշավոր իրադարձությունների ականատես եւ հրաշքով փրկված մեծանուն Կոմիտասը խենթացավ եւ իր մահկանացուն կնքեց Փարիզի հոգեբուժարանում:

Համարելով ժողովրդի դիմադրության ողջին կոտրված, քանի որ ոչնչացված էր ժողովրդի ռազմունակ մասը, եւ գլխատված՝ նրա կազմակերպիչ սերուցքը, երիտթուրքերը ձեռնամուխ եղան անպաշտպան ժողովրդի՝ կանանց, երեխաների ու ծերունիների զանգվածային ջարդերին ու տարագրությանը, որոնք իրականացվեցին անօրինակ դաժանությամբ եւ անմարդկայնությամբ: Տեղի ունեցավ մարդկության պատմության մեջ առաջին ցեղասպանությունը, որին զոհ գնաց 1,5 մլն. մարդ: Հայաջինջ քաղաքականությունն իրագործվեց ոչ միայն Արեւմտյան Հայաստանում, այլեւ կայսրության ամբողջ տարածքում՝ բացառությամբ միաժամանակ Կոստանդնուպոլսի եւ Զմյուռնիայի հայերի, որոնց ոչնչացումն օտարազգիների ներկայությամբ հղի էր միջազգային բարդություններով: Հայերը ոչնչացվեցին թե՛ իրենց բնակավայրերում, թե՛ տարագրության ճանապարհին եւ թե՛ համակենտրոնացման ճամբարներում ու աքսորավայրերում: 200-250 հազար հայ կանայք ու երեխաներ բռնի մահմեդականացվեցին, որոնց մեծ մասին հնարավոր եղավ փրկել Առաջին աշխարհամարտի ավարտից հետո: Տարագրվածները հիմնականում քշվեցին Միջագետքի անապատները՝ դեպի Մեսքենե, Ռակկա, Ռասուլ-Այն, Դեյր-էզ-Զոր եւ այլ վայրեր: Միջագետքի համակենտրոնացման ճամբարներում աքսորյալների թիվը 1916 թ. փետրվարի դրությամբ 600 հազար էր: Սակայն բռնագաղթյալները նույն թվականի գարնանը ենթարկվեցին նոր աներեւակայելի ջարդերի, որոնց զոհ գնաց նրանց կեսից ավելին: Ժամանակին երիտթուրքերի պարագլուխների եւ արդի թուրք պատմաբանների այն պնդումները, թե տեղահանությունները թելադրված էին պատերազմական իրավիճակով, ոչ մի հիմնավորում ու արդարացում չունեն, քանի որ բնաջնջման քաղաքականությունը շարունակվում էր նաեւ աքսորավայրերում: Նպատակը հայության ոչնչացումն էր, որովհետեւ երիտթուրքերը խիստ անհանգստացած էին հաշտության բանակցություններում Հայկական հարցի բարձրացումից:



Արեւմտահայության մի նշանակալից հատվածը՝ ավելի քան 250 հազար մարդ, Վասպուրականից եւ Արեւմտյան Հայաստանի արեւելյան այլ շրջաններից կարողացավ փրկվել կոտորածներից եւ անցնել Արեւելյան Հայաստան ու Կովկաս: Արեւմտահայերի մի նշանակալից հատվածը մշտական տեղաշարժերի ու գաղթի պատճառով զոհ գնաց տարափոխիկ հիվանդություններին, քաղցին ու ցրտին: Արեւելյան Հայաստանում հաստատված արեւմտահայությունը գործոն մասնակցություն ունեցավ Հայաստանի հանրապետության ստեղծման ու կայացման գործում:

Հայոց Մեծ եղեռնը հայոց պատմության ամենաողբերգական էջն է, սակայն այն նաեւ մարդկության նորագույն պատմության ամենամռայլ էջերից է: Հակառակ թուրք ջարդարարների սպասելիքների, գրեթե ձեռնատված ու գլխատված հայ ժողովուրդն այնուամենայնիվ կարողացավ դիմակայել թուրք ջարդարարներին եւ կազմակերպել դիմադրություն: Վանի, Մուսա լեռան, Ուռհայի, Շաբին-Կարահիսարի եւ այլ վայրերի հայության հերոսական ինքնապաշտպանության շնորհիվ տասնյակ հազարավոր հայեր փրկվեցին կոտորածներից: Հերոսամարտիկները գերադասում էին արժանապատիվ մահը՝ մերժելով բռնագաղթն ու աքսոր:

Այսօր, երբ թուրքական պատմագիտությունն ամեն կերպ փորձում է «հիմնավորել», թե հայերն անգամ իրենց հայրենիքում փոքրամասնություն են կազմել, ավելորդ չի լինի անդրադառնալ Արեւմտյան Հայաստանի էթնիկական պատկերին: Կոստանդնուպոլսի պատրիարքարանի 1912 թ. կազմած տեղեկագրի համաձայն՝ հայերի թիվը հայկական վեց վիլայեթներում եւ Օսմանյան կայսրությունում ուներ հետեւյալ պատկերը.

| | |
|---|---|
| **Հայկական վիլայեթներում** | |
| Կարինում (Էրզրումում) | 215000 |
| Վանում | 197000 |
| Բիթլիսում | 198000 |
| Դիարբեքիրում | 124000 |
| Մամուրեթ-ուլ-Ազիզում (Խարբերդում) | 204000 |
| Սեբաստիայում (Սըվազում) | 225000 |
| Ընդամենը՝ | 1163000 |
| **Օսմանյան կայսրությունում** | |
| Հայկական վեց վիլայեթներում | 1163000 |
| Ադանայի վիլայեթում | 118000 |
| Մարաշի սանջակում | 69000 |
| Տրապիզոնի վիլայեթում | 65000 |
| Կոստանդնուպոլսում | 150000 |
| Մյուս մասերում | 461700 |
| Ընդամենը՝ | 2026700 |

Շարունակությունը՝ էջ 10




# Վլադիմիր Սոլովյով
# ԵՐԵՔ ԶՐՈՒՅՑ

Սկիզբը՝ էջ 6

**ԻՇԽԱՆ** - Ա՛յ քեզ քրիստոսասեր զորականություն:

**ԳԵՆԵՐԱԼ** - Կազակնե՞րը... Իսկական ավազակներ են: Միշտ էլ այդպիսին են եղել:

**ԻՇԽԱՆ** - Էս ի՞նչ է, մենք երազում ենք, ինչ է:

**ԳԵՆԵՐԱԼ** - Ինձ էլ է թվում, թե ինչ-որ բան այնպես չէ: Ոչինչ չեմ հասկանում: Իսկապես, ինչի՞ մասին եք հարցնում:

**ՔԱՂԱՔԱԳԵՏ** - Իշխանը, հավանաբար, զարմանում է, որ ձեր իդեալական, գրեթե սուրբ կազակները հանկարծ, ձեր իսկ խոսքերով, դարձան իսկական ավազակներ:

**ԻՇԽԱՆ** - Այո՛, եւ ես հարցնում եմ՝ ինչպե՞ս կարող է պատերազմը լինել «մեծ, ազնիվ եւ սուրբ գործ», երբ, ըստ ձեզ, ստացվում է, որ դա մի խումբ ավազակների պայքար է մյուսի դեմ:

**ԳԵՆԵՐԱԼ** - Է՛... Ահա թե ինչ. «Մի խումբ ավազակների պայքար՝ մյուսի դեմ»: Հենց բանն այն է, որ ուրիշների, ուրիշ տեսակի դեմ: Թե՞ դուք կարծում եք, որ առիթի դեպքում կողոպտելը նույնն է, ինչ երեխաներին մոր աչքերի առաջ ածուխների վրա խորովելը: Իսկ ես ահա ինչ կասեմ: Այդ գործում խիղճս այնքան մաքուր է, որ ես հիմա էլ երբեմն ի սրտե ափսոսում եմ, որ երրորդ համազարկի հրամանից հետո չեմ մեռել: Եվ ոչ մի երկսակած չունեմ, որ եթե մեռնեի, իմ երեսունյոթ զոհված կազակների հետ, անմիջապես կհայտնվեի Բարձրյալի առաջ, եւ մեր տեղը կգրավեինք դրախտում՝ ավետարանական բարի ավազակի կողքին: Եվ պատահական չէ, որ նա, ըստ Ավետարանի, այնտեղ է գտնվում:

**ԻՇԽԱՆ** - Այո՛: Բայց դուք դժվար թե Ավետարանում գտնեք, որ այդ բարի ավազակին նմանվել կարող են միայն մեր հայրենակիցները, մեր հավատակիցները, իսկ բոլոր ժողովուրդների եւ կրոնների մարդիկ՝ ո՛չ:

**ԳԵՆԵՐԱԼ** - Դուք ինչ է՝ իմ մասին որպես մեռածի եք խոսում: Ես ե՞րբ եմ այդ հարցում տարբերություն դրել ժողովուրդների եւ կրոնների միջեւ: Ի՞նչ է՝ հայերն իմ հայրենակիցնե՞րն էին, թե՞ հավատակիցները: Եվ արդյո՞ք ես հարցրել եմ, թե ինչ հավատք ունեին, կամ ինչ ցեղից էին այդ սատանայի ծնունդները, որոնց ես մանրագնդակներով ջարդուփշուր արեցի:

**ԻՇԽԱՆ** - Բայց դուք մինչ հիմա էլ չեք փորձում հիշել, որ հենց այդ սատանայի սերունդը, այնուամենայնիվ, մարդիկ էին, որ յուրաքանչյուր մարդու մեջ կա բարին եւ չարը, եւ որ յուրաքանչյուր ավազակ, լինի դա կազակ թե բաշիբոզուկ, կարող է լինել ավետարանական այն բարի ավազակը:

**ԳԵՆԵՐԱԼ** - Դե արի եւ գլուխ հանիր ձեզանից: Մեկ ասում էիք, թե չար մարդը նույնն է, ինչ անպատասխանատու գազանը, հիմա էլ, ըստ ձեզ, երեխաներին խորովող բաշիբոզուկը կարող է ավետարանական բարի ավազակը լինել: Եվ այս ամենը միայն նրա համար, որ չարին որեւէ կերպ մատով չդիպչեք: Իսկ, ըստ իս, կարեւորն այն չէ, որ յուրաքանչյուր մարդու մեջ կան ե՛ւ բարու, ե՛ւ չարի սաղմեր, այլ այն, թե նրա մեջ այդ երկուսից որն է բնակալել: Հետաքրքիրն այն չէ, թե ամեն տեսակ խաղողի հյութից կարելի է ե՛ւ գինի, ե՛ւ քացախ պատրաստել, այլ կարեւոր է, թե այդ 22երից որն է, որ գինի է պարունակում, որը՝ քացախ... Որովհետեւ՝ եթե դա քացախ է, ես էլ սկսեմ խմել բաժակներով եւ ուրիշներին էլ հյուրասիրեմ այն մտայնությամբ, թե դա նույն հյութից է պատրաստված, որից եւ գինին, ապա չէ՞ որ այդ իմաստությամբ ես ոչ ոքի ոչ մի օգուտ չեմ տա, բացի ստամոքսը փչացնելուց: Բոլոր մարդիկ եղբայրներ են: Սքանչելի է: Շատ ուրախ եմ: Իսկ հետո՝ ի՞նչ: Չէ՞ որ եղբայրները տարբեր են լինում: Իսկ ինչո՞ւ չհետաքրքրվեմ, թե իմ եղբայրներից որն է Կայենը եւ որը՝ Աբելը: Իսկ եթե իմ դեմ իմ եղբայր Կայենը քերթում է իմ եղբայր Աբելի մաշկը, եւ ես էլ, չկարողանալով անտարբեր մնալ եղբայրներիս հանդեպ, մի այնպիսի ապտակ եմ տալիս Կայեն եղբորս, որ նա այլեւս նման վայրագություն չփորձի անել, դուք ինձ հանկարծ պիտի կշտամբե՞ք, թե մոռացել եմ եղբայրության մասին: Շատ լավ էլ հիշում եմ, ուստի եւ միջամտեցի, իսկ թե չհիշեի, կարող էի կողքով հանգիստ անցնել:

**ԻՇԽԱՆ** - Բայց որտեղի՞ց այդ երկընտրանքը՝ կա՛մ կողքով անցնել, կա՛մ ապտակել:

**ԳԵՆԵՐԱԼ** - Դե, նման դեպքում երրորդ տարբերակ չեք գտնի: Այ, դուք երեւի կառաջարկեիք, որ ես աղոթեի Աստծուն՝ ուղղակի միջամտության համար, որպեսզի Նա, ուրեմն, մի ակնթարթում եւ այն էլ Իր սեփական Աջով խելքի բերեր ամեն մի սատանայի որդու. կարծում եմ՝ դուք ինքներդ էլ այդ միջոցից կիրառժարվեիք: իսկ ես կասեմ, որ այդ միջոցը բոլոր դեպքերում լավ է, սակայն ոչ մի գործ իրենով փոխարինել չի կարող: Չէ՞ որ բարեպաշտ մարդիկ ճաշից առաջ աղոթում են, իսկ ծամելն իրենք են ծամում՝ իրենց սեփական ծնոտներով: Չէ՞ որ ես էլ առանց աղոթքի հրամաններ չէի տալիս ձիավոր հրետանուն:

**ԻՇԽԱՆ** - Նման աղոթքը, անշուշտ, սրբապղծություն է: Հարկ է ոչ թե Աստծուն աղոթել, այլ գործել աստվածահաճո:

**ԳԵՆԵՐԱԼ** - Այսի՞նքն:

**ԻՇԽԱՆ** Նա, ով իրականում տոգորված է ճշմարիտ ավետարանական ոգով, ապա, անհրաժեշտության դեպքում, իր մեջ կգտնի ընդունակություն՝ ե՛ւ խոսքերով, ե՛ւ վարմունքով, ե՛ւ իր ողջ կեցվածքով ներգործելու իր դժբախտ, խավարամիտ եղբոր վրա, որը ցանկանում է իրագործել սպանություն կամ որեւէ այլ չարագործություն, կկարողանա այնպիսի ցնցող տպավորություն թողնել եղբոր վրա, որ նա անմիջապես կըմբռնի իր սխալը եւ կիրաժարվի սին ճանապարհից:

**ԳԵՆԵՐԱԼ** - Ա՛յ քեզ սրբեր: Ուրեմն ես երեխաներ խորովող այդ բաշիբոզուկների առաջ պիտի ազդեցիկ վարմունք ցուցաբերեի՞ եւ ասեի ազդեցիկ խոսքեր:

**ՊԱՐՈՆ Z** - Խոսքերը, տվյալ դեպքում, հեռավորության եւ մեկմեկու լեզուն չիմանալու պատճառով, թերեւս, անտեղի կլինեին: Իսկ ինչ վերաբերում է ցնցող տպավորություն թողնող վարմունքին, ապա, տվյալ դեպքում, համաձայն եմ, որ մանրագնդակների համազարկերից ավելի լավ բան չես հորինի:

**ՏԻԿԻՆ** - Հիրավի, ի՞նչ լեզվով կամ ի՞նչ գործիքով գեներալը կարող էր բացատրվել բաշիբոզուկների հետ...

*Թարգմ.՝*
*Դանիել ԵՐԱԺՇՏԻ*

# ԺՈՂՈՎՐԴԻ ՓՈՐՁՈՒԹՅԱՆ ԺԱՄԸ եւ մուսաների երգը



Հայ մտավորականների աքսորումը

*Սկիզբը՝ էջ 8*

Այստեղ ոչ միայն մարդկային ճակատագրերի դրամատիզմն է, այլեւ ժողովրդի ու հայրենիքի ողբերգությունը: 1915-ի նախատակ սերունդի գրողները ջարդի, եղեռնի մղձավանջային պատկերների հետ մեկտեղ բերում էին նաեւ պատգամի կոչեր: Ռ. Սեւակի «Կիլիկյան երգեր» շարքի «Վերջին օրոր» բանաստեղծության մեջ մայրը, խոսքն ուղղելով նորածին մանկանը, ասում է.

Արյան հեղեղ հորդեց այս սուրբ ձորերն,

Բայց չի վախիս, փարե երկրիդ, զայն սիրե,

Հողիդ վրա գերի մ'ըլլար, այլ տիրե.



Օրո՜ր ըսեմ՝ քնանաս...

Նույնն էին ասում նաեւ Յարճանյանն ու Վարուժանը: Յարճանյանի «Հայրենի հրավեր»-ը տասներկու կոչ է՝ ուղղված տարագիր հայությանը. հոգեվարքի մեջ գտնվող հայրը, ամուսնու բացակայությամբ արդեն իսկ այրիացած հարսը, մայրը, եղբայրը հայրենի հրավեր են ուղղում իրենց աստանդական հարազատին: Նույն պաղատանքով սպասում են նաեւ հայրենի դաշտերը: Նույնն է նաեւ Վարուժանի պոեզիան՝ «Կարոտի նամակ», «Մարած օճախը» եւ, ընդհանրապես, ամբողջ «Բագինին վրա» շարքը:

Ողբերգական ներկայի այս հեռապատկերում ապագան, թեեւ անորոշ, բայց փրկության հույս էր՝ ազգահավաք եւ երկրի վերաշինում: Դեռ պետք է գար «Հացին երգի» ժամանակը՝ խաղաղ, ստեղծարար աշխատանքը:

Անցյալն իմաստավորվում էր հեթանոսական ժամանակների պատմական անցքերի, այդ դարաշրջանի ուժեղ եւ կորովի ոգու վերակոչմամբ, որն ուներ ժողովրդին իր նախնիների փառքով ոգեպնդելու եւ դաստիարակելու նշանակություն: Հեթանոսական անցյալի ոգեկոչումը դարասկզբի արեւմտահայ գրականության համար դառնում է որոշակի նպատակ եւ ծրագիր: Դրա արտահայտությունն է Վարուժանի «Հեթանոս երգեր» ժողովածուն, որը բացվում է «Նավասարդյան» վերնագրված ծրագրային բանաստեղծությամբ:

Եղեռնի առաջին անմիջական հարվածից հետո նույն այդ եղեռնից մի կերպ փրկված Հակոբ Օշականն իր վեպերում ու վիպաշարերում («Մնացորդաց», «Հաբյուր մեկ տարվան», «Ծակպտուկը» եւ այլն) փորձեց հասկանալ թուրքի բրքությունը եղեռնը նյութելիս, եղեռնից առաջ, եղեռնի ժամանակ, եղեռնից հետո եւ այդ նպատակով անգամ կենսաբանական վերլուծության ենթարկեց նրան: Տասնյակ էջեր նա նվիրեց հայի ու թուրք պաշտոնյայի երկխոսությանը՝ դրանով իսկ փորձելով ճանաչել հայ եւ թուրք հարաբերության իրական դրվածքը: Փորձեց, բայց, ի վերջո, կիսատ թողեց «Մնացորդաց»-ը, չգրեց վեպի չորրորդ հատորը, որը պետք է պատկերեր անմիջապես ջարդերի ժամանակը, որովհետեւ հոգեպես այլեւս ի վիճակի չէր ապրել այդ ահավոր մղձավանջը:

Ասես նույն այդ կետից շարունակելով՝ Վ. Թեքեյանն արձագանքեց. «Դժոխային այս տռամն ինչպես կրնա պատմվիլ»:

Դժոխային դրամա, այսինքն՝ եղեռն:

Բայց պետք է պատմվի:

Եվ պատմեցին. Հ. Թումանյանը՝ իր «Հայրենիքիս հետ» (1916) ժողովածուում եւ «Հոգեհանգիստ» բանաստեղծության մեջ, Վ. Տերյանը՝ իր «Երկիր Նաիրի» շարքում, Ա. Իսահակյանը՝ իր առանձին գործերում, Կ. Զարյանը՝ իր վեպերի, ճամփորդական գրառումների ու չափածո գործերի մեջ, Ե. Չարենցը՝ իր «Երկիր Նաիրի» վեպում եւ պոեմներում, Ա. Բակունցը՝ իր պատմվածքներում, Գ. Մահարին՝ «Այրվող այգեստաններ» վեպում եւ բանաստեղծություններում, Զ. Եսայանն ու Վ. Թոթովենցը՝ իրենց արձակ էջերում, Խ. Դաշտենցը՝ «Ռանչպարների կանչը» վիպասքում, Մ. Գալշոյանը՝ իր ամբողջ գրականությամբ, որի լավագույն արտահայտությունը «Մարութա սարի ամպերը» պատմվածաշարն է, Հ. Շիրազը՝ իր «Հայոց դանթեականը» պոեմում եւ մյուս գործերում, Պ. Սեւակը՝ «Անլռելի զանգակատուն» եւ «Եռաձայն պատարագ» պոեմներում, Վ. Դավթյանը, Գ. Էմինը, Ռ. Դավոյանը եւ ավագ ու կրտսեր սերունդի բոլոր գրողները՝ իրենց տարաբնույթ ստեղծագործությունների մեջ:

Եղեռնի պատկերումը բնականաբար ու ինքնաբերաբար դարձավ նաեւ սփյուռքահայ գրականության առաջնահերթ խնդիրներից մեկը: Գրվեցին Վազգեն Շուշանյանի «Երկիր հիշատակաց» պոեմը, «Օրերը գեղեցիկ չեն», «Ճերմակ Վարսենիկ» վեպերը, Մուշեղ Իշխանի «Տուների երգը» բանաստեղծությունների ժողովածուն, Շահան Շահնուրի «Նահանջը առանց երգի» վեպն ու պատմվածքները, Վահե-Վահյանի, Վահե Հայկի, Հակոբ Մնձուրու, Անդրանիկ Ծառուկյանի, Զարեհ Որբունու, Հակոբ Ասատուրյանի եւ շատ ուրիշների գեղարվեստական էջերը:

Եղեռնի պատկերումը դարձավ նաեւ օտարագիր հայ գրականության հիմնական ասելիքներից մեկը՝ ասպարեզ հանելով Վիլյամ Սարոյանի, Լեւոն-Զավեն Սյուրմելյանի, Մայքլ Արլեն Կրտսերի, Սեւդա Սեւանի, Վահե Քաչայի, Փիթեր Բալաքյանի, Դայանա Տեր-Հովհաննիսյանի պատմվածքները, վեպերն ու բանաստեղծությունները:

Ֆրանց Վերֆելի «Մուսա լեռան քառասուն օրը» վեպին հաջորդեց գերմանացի գրող Էդգար Հիլզենրատի «Վերջին մտքի հեքիաթը» վեպը, ապա եւ՝ թուրք բանաստեղծ ու արձակագիր Քեմալ Յալչընի «Հոգիս բեզանով է խայտում» փաստագրական վեպը:

Ջարդ-եղեռն-ցեղասպանություն, բնիկ ժողովրդի տեղահանություն, բռնագաղթ, աքսոր ու տարագրություն՝ սա աշխարհի մեղքն է: Նախատակ հայ բանաստեղծի պես այսօր էլ մենք դեռ նայում ենք մարդկային արդարությանը, այնինչ մարդկային արդարությունը սոսկ չշրջանառվող մանրադրամ է մեծ երկրների քաղաքականության մեջ: Ուրեմն՝ ի՞նչ: Ուրեմն՝ ա՛յն, ինչ ասել է մեծ բանաստեղծը ամենադժվար օրերին. «Ով հայ ժողովուրդ, քո միակ փրկությունը քո հավաքական ուժի մեջ է...»:

Հավաքվել ու բռունցքվել, դառնալ ազգային, պետական, քաղաքական, տնտեսական, ֆինանսական, հոգեւոր-մշակութային, ինչո՞ւ չէ, նաեւ ռազմական ուժ եւ հայի արժանապատիվ պահանջատիրության փոխել նահրյան հինավուրց ողբն ու մորմոքը: Ցավը մերն է, պատմությունը մերն է, մերն են նաեւ հայրենիքի ներկան ու ապագան: Ապագա սերունդներին ժառանգենք ոչ միայն ցավ ու մորմոք, այլեւ հայրենիք պահելու, հայրենիք կառուցելու եւ հայրենիքում ապրելու ուժ ու ոգեւորություն...

*Դավիթ ԳԱՍՊԱՐՅԱՆ*
*Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր*

# ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՄԵՆԱՄՌԱՅԼ ԷՋԸ

*Սկիզբը՝ էջ 9*

Սակայն ժողովրդագրական ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Կոստանդնուպոլսի պատրիարքարանի հապճեպ իրականացրած մարդահամարը լիովին չի արտահայտում հայության իրական թվաքանակը: Ժողովրդագետ Գ. Բադալյանի համակողմանի քննության արդյունքում պարզվել է, որ հայերը հայկական վեց վիլայեթներում եւ Ա. Մանդելշտամի նախագծով նախատեսված հայկական նահանգի տարածքում կազմում էին.

**Ըստ ճշգրտված տվյալների**
**Հայկական վիլայեթներում**

| | |
|---|---|
| Կարինում (Էրզրումում) | 249800 |
| Վանում | 219000 |
| Բիթլիսում | 271000 |
| Դիարբեքիրում | 140000 |
| Մամուրեթ-ուլ-Ազիզում (Խարբերդում) | 234000 |
| Սըվազում (Սեբաստիայում) | 242000 |
| Ընդամենը՝ | 1355800 |

**Ստեղծվելիք Հայկական նահանգի տարածքում ըստ պատրիարքարանի**

215000
185000
180000
105000
168000
165000
1018000

**ըստ ճշգրտված տվյալների**

249800
207000
253000
121000
198000
182000
1210800

**Հայերի թիվը Օսմանյան կայսրությունում (ըստ ճշտված տվյալների)**

| | |
|---|---|
| Հայկական վեց վիլայեթներում | 1355000 |
| Ադանայի վիլայեթում | 124350 |
| Մարաշի սանջակում | 86800 |
| Տրապիզոնի վիլայեթում | 88000 |
| Կոստանդնուպոլսում | 161000 |
| Այլ մասերում | 535600 |
| Ընդամենը՝ | 2350750 |

**Ըստ մոտավոր ճշտված տվյալների՝ Ա. Մանդելշտամի նախագծով ստեղծվելիք Հայկական նահանգի էթնիկական կազմն ուներ հետեւյալ պատկերը.**

| | | |
|---|---|---|
| Հայեր | 1210800 | 43,215% |
| Հույներ | 42000 | 1,499% |
| Նեստորականներ | 123000 | 4,39% |
| Եզիդիներ | 37000 | 1,321% |
| Թուրքեր | 660000 | 23,556% |
| Քրդեր | 424000 | 15,133% |
| Ղզլբաշներ | 140000 | 4,997% |
| Զազաներ | 77000 | 2,748% |
| Այլ մահմեդականներ | 88000 | 3,141% |
| **Ընդամենը՝** | **2 801 800, որից** | |
| Քրիստոնյաները եւ եզիդիները | 1412800 | 50,425% |
| Մահմեդականները | 1172000 | 41,830% |
| Ղզլբաշներ եւ զազաներ | 217000 | 7,745% |

Հայոց Մեծ եղեռնը վերապրել են 865 700 արեւմտահայեր, որոնցից 262 500-ը, կոտորածներից փրկվելով, անցել են Արեւելյան Հայաստան, Անդրկովկաս եւ Հյուսիսային Կովկաս: Հայոց Մեծ եղեռնին զոհ են գնացել 1 421 250 արեւմտահայեր, 63 800 կանայք ու որբեր բռնի մահմեդականացվել են:



*Ծնթ. Հետագա ուսումնասիրությունների արդյունքում հայ բնակչության թիվը կարող է մեծացման միտում ունենալ:*

*2005 թ. լրացավ Հայոց Մեծ եղեռնի 90-ամյակը: Թուրքիայի ներկա իշխանություններն ամեն գնով աշխատում են մերժել ցեղասպանությունը՝ համարելով այն պատմաբանների քննության առարկա եւ անգամ մեղադրելով հայերին՝ թուրքերի ցեղասպանություն իրագործելու մեջ: Սակայն ցեղասպանությունը վաղեմություն չունի: Հայոց ցեղասպանությունը, որ ժամանակին դատապարտել են այնպիսի նշանավոր դեմքեր, ինչպիսիք են Ա. Ֆրանսը, Ռ. Ռոլանը, Ֆ. Նանսենը, Ջ. Բրայսը, Յ. Լեպսիուսը, Վ. Վիլսոնը, Դ. Լլոյդ-Ջորջը, Ջ. Քերզոնը եւ շատ ուրիշներ, այսօր ճանաչել են աշխարհի մեկ ու կես տասնյակ երկրներ, եւ վաղ թե ուշ ստիպված կլինի ճանաչել նաեւ Թուրքիան եւ հատուցել հայերի կրած նյութական կորուստներն ու վերադարձնել բռնազավթված հայրենիքը:*

*Բաբկեն ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ*
*Պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր*

